

"Droschak"

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՃՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ն Ո Ր Շ Ր Զ Ա Ն

Միահամուռ ու որոտընդոստ ծափահարութիւնները, „Վիկտորիա Հալլի“ հազարաւոր ունկնդիրների ինքնաբուռն ոգևորութիւնն ու համակրանքը քիչ էին՝ Քրանսիս դը Պրէսանսէի բանաստեղծութիւնը ըստ արժանւոյն գնահատելու համար։ Անզուգական հրապարակախօսը, նա որ գիշեր-ցերեկ որոճում է համաշխարհային քաղաքականութեան բազմակնճիռ պրօբլէմները, արտասանեց այդ երեկոյ այնպիսի խօսքեր, տւեց հանդիսականներին այնպիսի հրահանգներ հայկական իրականութեան վերաբերմամբ, որոնց սովոր չեն եւրօպական ժամանակակից սերնդի ականջները և որոնց մենք արձանագրում ենք սրտի խորին գոհունակութեամբ, որովհետև վաղուց սպասում էինք...

„Այս տեսակ պայմանների մէջ — որքան էլ կռիւը ինքնըստինքեան պօքալի լինի — մէկ ճար է միայն մնում, փրկութեան մէկ միայնակ միջոց հայերի համար՝ դա կռիւն է, կռիւը իր բոլոր ծայրայեղութիւններով, կռիւը յանուն պատմութեան, յանուն անցեալի, յանուն Յեղափոխութեան, բառիս բացարձակ իմաստով...“

„Հերոսները կ'ընկնեն, նահատակների արիւնը կ'ը հոսէ առատութեամբ, բայց դա ապարդիւն չի անցնի։ Տաճիկները կարող են հարկւրաւոր կախաղաններ տնկել, ինչպէս ասում էր Ադրիանուպօլսում կախած Պետրոս Սերէժմեան, բայց նրանք չեն կարող սպանել գաղափարը...“

„Եւ մենք, որ հեռուից ականատես ենք այդ յարատեւ նահատակութեան, պիտի գիտակցենք, որ բարեգործական օգնութիւնը որբերին ու փախստականներին՝ բաւական չէ դեռ. մենք պիտի գործ դնենք այնպիսի ճնշում կառավարութիւնների և նրանց ներկայացուցիչների վրայ, որ նրանք իրենց շահի տեսակէտից իսկ ի վերջոյ տեղի տան մեր պահանջների առաջ“...

Կուի հրաւեր... Եւրօպական օգնութիւն հայ մարտիկներին... Այդ վաղուց սպասում էինք այդ կազմակերպչ, սրտապնդող յորդորներին։ Վաղուց է, հայ յեղափոխական փորձամասնութիւնը աչքերը դէպի արեւմուտք յառած՝ սպասում էր դիւցազնական կռիւների որրաններից մի բերան կեցցէ՛, քաջալերական մի խօսք, որ լինէր սանկցիա իր մղած պայքարին։ Խստապահանջ չէինք։ Վամաւորներ չէինք պահանջում. դրամական նպաստներ

չէինք աղերսում։ Պահանջում էինք միայն ուխտագրութեւրօպայից, որ գէթ յարգւին մեր հերոսները, գէթ գնահատւին նրանց գործերը, գէթ ճանաչւի հայկական կուլի օրինաւորութիւնը։

Այսօր յարգանքի այդ խօսքը թէև անապան՝ բայց հնչում է վերջապէս հեղինակաւոր ու անկեղծ շեշտով և այն՝ ոչ միայն մամուլի մէջ, այլև հրապարակական ամբիօնից, միջազգային հասարակութեան առաջ։

„Ուրիշ եւք չի մնում. կամ պէտք է միանանք հայ հերոսներին՝ հայկական դիմագրութիւնը ուժեղացնելու համար, կամ թէ պիտի դառնանք մեղսակից Ոճրագործին“։

Անմոռանալի խօսքեր... Եւ մենք յիշում ենք մշտքերի զուգորդութեամբ անցեալ դարու քսանական թւականները, երբ նոյնանման հրաւերներ էին լսում հանգէպ մի ուրիշ լքած ժողովուրդի, երբ հելէնիզմի հոյակապ պարտութեան և մասսային ջարդերի լուրը որբերգական շառաչումով անցնում էր ամբողջ արեւմուտքի վրայից, երբ Բալթիկի ու Շատոբրիանի պէս գրական հակները գլուխ էին անցնում յունասէր շարժման, երբ կամաւորների լեգիօնները դրամական առատ օժանդակութիւններով ու որոտընդոստ կեցցէներով ծամբւում էին դէպի Բօցարիսների արիւնոտած հայրենիքը։

Որքան փոխւել են ժամանակները... Համարիա մի դար է անցել։ Այն ժամանակ դեռ Եւրօպան կիսավայրենի էր, միապետական, Ֆէօդալական։ Այսօր նա քաղաքակրթւած է, ազատամիտ, սահմանադրական։ Բայց որպիսի ճշող հակասութիւն երկու պերիօդների տրամագրութիւնների միջև։ Որպիսի ապշեցուցիչ անօժանդակ բարոյական զգացումների այդ դարաւոր էօլիւցիայի մէջ։ Ֆէօդալական Եւրօպան, ուրեմն, աւելի մատչելի էր գաղափարական թռիչքների համար...

Ժամանակները փոխւել են, արդարեւ։ Բայց մեղը չը ձգենք Եւրօպայի վրայ միայն։ Յանցաւոր ենք և մենք։ Չկարողացանք հաղորդել մեր յեղափոխական կուլին այն հմայքը, որ նա կարող էր ունենալ քաղաքակրթութեան առջև։ Չըմբռնեցինք ժամանակի պահանջները և ազատագրական շարժումը խրախուսելու տեղ՝ անիծեցինք ու հալածեցինք նրան։ Ազգովին չը գիտակցեցինք գաղափարի փրկարար ուժը և ընդվզումի գոռ ու եղբրական վայրկեաններում թողնք յեղափոխական փառքամասնութիւնը ի սաստ բախտի։ Մեր կոտորածները միայն աշխարհ դղրեացրին։ Մեր ծով արիւնը միայն ժողովուրդ-

ների համակրութիւնը շարժեց, բայց մի համակրութիւն, որ նոյնանում է ծոյլ, անպտուղ, նւաստացուցիչ արգասիքներն...

Եւ Եւրոպայի այլեւայլ կենտրոններում սկսեցին հնչել պատգամներ, որք ու յորդորներ, մամուլի մէջ և հրապարակական ամբիօններից անկող հայաստանները՝ իբրեւ արձագանք մեր հակայեղափոխական մեծամասնութեան տրամադրութիւնների՝ սկսեցին ներբողել հայի քրիստոնէական խոնարհութիւնը, սկսեցին հռչակել իրուր աշխարհի, թէ Հայաստանում չկայ ազատագրական կռիւ, թէ այնտեղ չկայ վերածնութեան շարժում, թէ հայը կոտորւում է, որովհետեւ քրիստոնիայ է, թէ նա գորշում է յեղափոխական պրօպագանդից, թէ նա զուրկ է անգամ ինքնապաշտպանութեան բնազդից:

Այո՛, հայազգի ֆիլիստերը և Եւրոպացի հարտացաւ հայասերը եռանդով ու դաւաճան անգիտակցութեամբ ձգնում էին թանձր սուեր ձգել մեր ազատագրական շարժման և նրա խրոխտ շամպիօնների վրայ և այնքան հեռու էին գնում իրենց «ազգասիրութեան» ու «հայասիրութեան» մէջ, որ մինչև իսկ կասկածի տակ էին դնում այն մարդկանց հայրենասիրութիւնը, որոնք մահը աչքերին առած՝ նետուում էին յեղափոխական փոթորիկների մէջ: Հայոց ազատութեան առաջամարտիկները «վարձկաններ» էին, կամ սոսկ «աւազակներ», «բախտախնդիրներ»...

Կայ արդեօք աւելի քստմեղի և աւելի ընդգիծ երևոյթ: Վարձկաններ... և այդ բառը շրջան էր անում Եւրոպայի մէջ, և շատ շատերը նոյնիսկ հայութեան անկեղծ բարեկամներից լիակատար *bonne foi*-ով հաւատում էին այդ այլանդակ առասպելներին: Նրանց ազդեցութեան տակ չէր արդեօք ինքը Պրէսանսէն, երբ 1896-ին *Cosmopolis* հանդէսի մէջ զետեղւած իր մի յօդւածով բացասական դիրք էր բռնում դէպի Բանկ Օտոմանի և Սամաթիայի հերոսները:

Այժմ միևնոյն Պրէսանսէն, տեսէք, ինչպիսի խանդավառութեամբ *Autor*-ի, «Պրօ Երմէնիայի» էջերում և հրապարակական բանախօսութեան մէջ ջատագովում է նոյն այդ Բանկ Օտոմանի դէպքը, Խանասօրը և մեր Անդրանիկներին ու Պետոններին: Այժմ միևնոյն Պրէսանսէն է, միևնոյն համաշխարհային *Temps* լրագրի քաղաքական բաժնի խմբագրողը, մի մարդ, որ սովորել է իրիստ չափաւոր տօնով գրել ու խօսել, — այժմ այդ միևնոյն մարդն է, որ հանդիսաւոր ու անվերապահ ոճով ազդարարում է, թէ յեղափոխութիւնից դուրս չիք փրկութիւն հայութեան համար:

Փոքր ինչ անագան այդ խոստովանութիւնը կրթութեանցն ու կը քարշէ իր ետևից շատ շատերին: Ուշագրաւ է, թէ ինչպէս երկուշաբթի օրւայ կօնֆէրանսի հմայիչ ազդեցութեան տակ յանկարծակի կերպարանափոխեց շվեյցարական ամենամեծ պահպանողական թերթերից միւր՝ *Journal de Genève*, որը մինչև օրս անուգ-

ղելի հակառակորդ էր հայ յեղափոխական շարժման: Այժմ նա մեղամաղձօրէն խոստովանելով որ յիրաւի յղժար է խաղաղ ճանապարհով աղդել Եւրոպայի վրայ, յիշեցնում է հայոց ազգային երգը.

Մեր հայրենիք թշւառ, անտէր,

Իւր որդիքը արգ կանչում է

Հանել իւր վրէժ...

Ճշմարտութիւնը ընթանում է սպանիչ դանդաղութեամբ, բայց յաղթանակում է վերջապէս Հայ հերոսների սիրագործութիւնները ապարդիւն չեն անցնում, արդարեւ: Հայկական կռիւը այժմ վերջապէս ապացուցանում է Եւրոպային իր ճակատագրական անհրաժեշտութիւնը: Չկայ այդ անհրաժեշտութեան աւելի մեծ սանկցիա, քան այն նշանաւոր խօսքերը, որ յունւարի 20-ին Փրանսիական պարլամենտում արտասանեց մի-նիստր Դելկասէ Հայաստանի վիճակի առթիւ. «Ճա կատագրական է թուում, որ եթէ ազգաբնակչութիւնները շարունակաբար և անպատիժ կերպով թալանւեն ու ենթարկւեն եղբուն ափորձերի — նրանք ի վերջոյ պիտի մտածեն, որ ամէն վիճակ լաւագոյն է, քան այն կեանքը, որ գտնւում է մասսային կոտորածի մղձաւանջի տակ»...

Մշուշը այդպիսով փարատւում է կամաց-կամաց: Հնորհիւ հայրենիքում մղած մեր ամենօրեայ պայքարին և շնորհիւ Եւրոպայի մէջ դեռ ևս կանգուն՝ Յեղափոխութեան մի շարք քաջարի շամպիօններին՝ հանրային կարծիքը լուսաւորւում է արդէն հայկական բուն իրականութեան նկատմամբ, նա սկսում է հասկանալ հայ ֆեդայու հոգեբանութիւնը: Հայը ներկայանում է Եւրոպային իր իսկական պատկերով, իր ազգային-ազատագրական ձգտումներով, իր անհանգիստ և անընկճելի տեմպերամենտով:

Գթութեան, արգահատանքի պրօպագանդը յետ ու յետ է մղւում և տեղի է տալիս Եւրոպայի մէջ պրօպագանդի մի նոր շրջանի: Թող այդ նոր շրջանի սկզբը նաւորութիւնը նոր թուիչ հաղորդէ հայ յեղափոխական կռիւն և նոր եռանդ հայոց լքւած հասարակութեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՓՐԱՆՍԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՍԷՋ

Պ. Ռուանէ, ընկերվարական երեսփոխանին ծառը հայկական հարցի մասին եւ Ցեղասէի պատասխանը:

Պ. Ռուանէ. — Նախ ներում կը խնդրեմ, որ այսօր անցաւ այս վիճարանութիւնը, երբ ես հարցապնդում խնդրեցի, Փրանկօ-թիւրը յարաբերութիւնները նոր խզւած էին: Անատեն գրեթէ չէր նախատեսւէր որ կառավարութիւնը, պահանջի մը գանձման համար, մեր

ծովային ուժը, զորահանգները բռնադատութեան գործիք մը պիտի ընէր, որ ընդհանուր մտքով աղգային աւելի բարձր գործեր կատարելու սահմանած է: (Շատ լաւ, շատ լաւ):

«Նաւատորմին հանրային կարծիքին մէջ առաջ բերած յուզումը ժողովին մէջ արձագանքը ունեցաւ, որ իսկոյն Սանթաի հարցապնդումին առթիւ վիճաբանութիւն ուղեց: Ես անատեն իմ հարցապնդումիս անմիջական վիճաբանութիւնը չպահանջեցի, որովհետեւ կը կարծէի և կը յուսայի, որ զանազան շարժառիթներուն մէջ, որոնք ստիպեցին Պ. Տէլքասէն, յեղակարծ որոշումով մը Թիւրքիոյ դէմ ճնշողական միջոցներու դիմել, հայկական գաւառներու կացութիւնը իրենց գրգիռ բաժինը ունէին կառավարութեան մարին վրայ:

«Նոյնիսկ Պ. Վոշէնին ի պատասխան բացատրութիւններուն մէջ զոր Պ. Նախարարը արտասանեց բեմէն, կը պնդէի հաւատարմ, որ շատ մը կէտերու վրայ կառավարութեան պահած լուծիւնը՝ խոհեմ վերապահում մըն էր և թէ հայերուն փրկագատութիւնը այս վերջնական որոշումներէն օտար չէր:

«Նախարարաց ժողովի նախագահին արտասանած քանի մը խօսքերը, Սանթաի օրակարգը մերժելու համար, իմ լաւատես մեկնութիւնը աւելի հաստատեցեցին դէպի արտաքին գործոց նախարարի լեզուն: Ահաւասիկ Պ. Նախարարին խօսքերը:

«Ինչպէս որ խորհուրդը չուզեր զոհել մեր համաքաղաքացիներու նիւթական շահերը, նմանապէս առաջնակարգ տեղ կուտայ իր մտադրադումին՝ ամբողջ բարոյական շահերու հայրենականդի մը, զոր պիտի չձգէ որ պակսի»:

«Աւելիք Ռուսո այսքան պարզորոշ ըլլալով ինծի անկարելի կը թուէր որ, պետութեանց գաշնագրերով ապահոված ազգի մը գոյութիւնը մեր երկրի բարոյական պարտաւորութիւններու թիւէն ջնջէր. սպասեցի:

«Այս յայտարարութենէ ետք, որու մէջ խոստում մը կը հաւատայի տեսնել, մեր նաւատորմը ետ կանչեցաւ:

«Սիսապաշտօնական նօթաներ մեզի իմացուցին որ սուլթանը Փրանսայի բոլոր պահանջներուն գոհացում կուտայ. ոչ մէկ տեղ չտեսայ որ Պ. Տէլքասէ ինպատակ հայերուն ունէ բան մը պայմանագրած ըլլար. ունէ դիմում չէ եղած մեր Պոլսոյ ներկայացուցչին կողմէ, սուլթանի կամքով սիստէմատիք սպաննութիւններուն և աւարառութիւններուն, որոնց մատնած են հայերը, առջևը առնելու համար. զի սուլթանը ինքն է որ կը հրամայէ Հայաստանի մէջ կատարած ոճիրները (Ձախէն ծափահարութիւններ):

«Ըսեցաւ որ Դեղին գիրք մը պիտի հրատարակէի, որուն կըսպասենք անհամբերօրէն. այս հրատարակութիւնը տեղի չունեցաւ:

«Կը հարցնեմ արտաքին գործոց Պ. Նախարարին, ինչո՞ւ այս լուծիւնը և մոռացումը: Կը խնդրեմ նաև որ բարեհաճի բացայայտ, դիւրամատչելի լեզուով լրացնել նոյ. 4-ի իր յայտարարութիւնները: Թող ըսէ մեզի այդ կամ ոչ, այսպէս հայերը ձգելով սուլթանի Համիդի մեթոտիկ սրածուծեան, քաղաքակրթութեան և մարդկութեան դէմ այդ արիւնարբու գահիճին ոճիրներու անպատեհ լիութիւնը, չէ՞ որ հայրենաւանդ բարոյական շահերու լքում մըն է, զոր նախարարաց խորհրդի Պ. Նախագահը կը հաստատէր որ չպիտի ձգէի որ պակսի (Ծափահարութիւններ ձախակողմէն):

«Հակառակ Պ. Տէլքասէի ժողովի բերած լաւատես տեղեկութիւններուն, Փրանսա հասած բազմաթիւ վկայութիւններ կ'ապացուցանեն որ 1900 և 1901 տարիներուն, Հայաստանի բոլոր կէտերուն վրայ, թշառները ինկած են մերթ թիւրքերուն հարածներուն տակ, մերթ քիւրդերուն, որոնք կառավարութեան հաճութիւնով կը թալնեն: Երբ թիւրքերուն կրօնական նախանձայուզութիւնը կամ քիւրդերուն անկշտութիւնը կը թուլնայ, իշխանութիւններն են որ հայերը հալածելու նախաձեռնութիւնը կըստանան:

«Արտաքին գործոց Պ. Նախարարը ըսաւ, որ հայերը ենթարկւած են այնպիսի կանոնադրութեանց որոնք կ'արգիլեն զանոնք եթէ ոչ ապրելէ, գոնէ բարգաւաճելէ, և կ'աւելցնէր:

«Ամենէն աւելի ընդհանուր անապահովութենէ հայերն են որ կը տառապին եւ յաճախ եղեռնագործութիւններու անպատեհութիւնը, որոնց զոհերն են հայերը, ենթադրել կուտայ որ, անոնք անսարսափ կը նային իրողութիւններուն վրայ»:

«Պարոններ, հիմա պիտի ցցնեմ որ, Պ. Նախարարին տւած տեղեկութիւնները թերի են:

«Արդարեւ մասնակի ոճիրները չեն, որուն ենթակայ են հայերը: 1900 և 1901-ին այն դրութեան մէջ էին, ինչ որ էին 1892-93-ին մեծ ջարդերու առաջին օրերը: Եւ ամէն ինչ հաւատալ կուտայ որ սուլթանը, քաղաքակրթութեան դէմ այս ոճիրներու ուղղակի և պատասխանատու հեղինակը, իր բնաջնջումի հալածանքը վար չէ ձգած:

«Ո՛ր կը վերջանայ անհատական սպանութիւնը և ո՛ր կըսկսի կոտորածը: Իմ թղթապանակիս մէջ աշխարհք մը թղթակցութիւններ ունիմ:

«Մուշի դաշտին մէջ կ'ըսէր Պ. Տէլքասէ, կոտորածները, որոնցմէ կը վախցէր, տեղի չունեցան: Ահա ինչ որ կը կարգամ Մուշի դաշտի գեղերէն մէկէն նամակի մը մէջ, որ եկած էր երեւելի պաշտօնակցիս, Պ. Պ. Քիյարի, որ՝ թրքական գործերու իր փորձառութիւնը կը նւիրէ հայերու պաշտպանութեան»:

«Պ. Ռուսնէ կը կարգայ Մշոյ դաշտէն «Պրօ Արմենիային» ուղղւած սրտաճմլիկ նամակը, ուր պատմած են աւերած 11 հայ գիւղերու անունները, քիչ-քիչ սպանութեանց թիւը, որ կը հասնի 106-ի, ուր ըսւած է թէ «սե գարուն» կանցնեն հայ կոյսերը և կիները:

«Պ. Ռուսնէ կը շարունակէ:

«Այս յուսահատ խորհրդածութիւնները հարկաւոր է միտք պահել, Պարոններ, զի 1900-1901-ին դրութիւնը նոյնն է ինչ որ էր 1891-93-ին, զի անոնք ցոյց կուտան որ այսօր, ինչպէս այնատեն, զոր կարելի է կոչել կոտորածներու պատրաստութեան շրջանը, թիւրք իշխանութիւնները նոյն միջոցներուն դիմեցին իրենց գործած կամ հրամայած ոճիրներու հետքերը սրբելու համար. միաժամանակ, եթէ կարելի է այսպէս ըսել, ետևէն կը քաշեն միւսիւրման ժողովուրդները, ամենաշայն կոտորածներու կատարման և եղեռնագործութեան համար:

«Այս նպատակով երբ հայեր սպաննւին գիւղի մը մէջ, երբ տներ հրդեհեն, երբ հօտեր քշեն տանին, թիւրք իշխանութիւնները իսկոյն կը հռչակեն, որ այդ չարիքներու հեղինակները հայ յեղափոխականներն են: Եւ որովհետեւ այս պատճառներով անձշմարտանման կարող են թուիլ հայերէն կը պահանջեն որ իրաւ է ըսեն. անոնց՝ սուլթանին ուղղւած աղերսագրեր ստորա-

գրեւ թալով, որուն մէջ այս դժբախտները կ'ամբաստանեն իրենց հայրենակիցները, անոնց վերագրելով իրենց կրած բոլոր չարիքները:

«Բայց, պիտի ըսէք, ի՞նչպէս հայերը այսօրինակ խաբէութեան մէջ կ'իյնան:

«Ահա թէ ինչպէս կ'ընեն թիւրք իշխանութիւնները: Օգոստոս 30-ին Մուշէն եկած թղթակցութեան մը մէջ կը կարդամ:

«Բերդակի բոլոր բնակիչները փակեցին եկեղեցիին մէջ, և անոնց ցցնելով երեք անտուկ լեցուն նափթ ըսին անոնց,—հիմա ձեր գիւղին ինչ կայ չի կայ պիտի այրենք: Գիւղացիք սարսափահար, կ'աւելցնէ թղթակցը, ստորագրեցին ուղերձը»:

«1900-ին նոյնը պատահած է Սպաղանք՝ 1900 յուլիս 3 և 4-ի կոտորածին հետեւանքով և որ ահ ու սարսափի մատնեց ոչ միայն այս նահանգը այլև ամբողջ Հայաստանը և ամէն տեղ, ուր կայ հայ մը, հաւատարիմ ֆեոդալ իր նախնիքներու երկրին, իր արեւակից եղբայրներուն և կրօնին:

«1900 յուլիս 3-ին քրդական հրոսակներ, 1,000 հոգիէ զինուորական վաշտի մը հետ, կը գրաւեն Տաւուրիկը և Կէլիէգուզանը, կը կտրեն Սպաղանքի հետ ամէն հաղորդակցութիւն, և արշալուսին՝ փողերը հնչեցնելով անպաշտպան ժողովուրդին վրայ կը յարձակին: Բնակիչները յանկարծակիի եկած և շարած, լեռնադաշտերը կը փախչին և եկեղեցիները կ'պատստանին: Չեռք ինկնողը կըսպաննեն, առանց խնայելու կնոջ, երախայի և ծերունիներու: Կիները, կ'ըսէ թղթակից մը, հանեցնելէ ետքը կը բռնաբարեն ու կըսպաննեն: Կը փետտեն ութսունամեայ Տ. Պողոս քահանային մօրուքը, անոր բերանը երկուք կը ճեղքեն, յետոյ չարչարելով կըսպաննեն:

«Յարձակողներու պետին ատելութիւնը մեծ էր մանաւանդ Սպաղանքի ըէսին դէմ, գտնել կուտայ անոր կինը Տիմէդ, և տեսնելով որ յղի է, ճեղքել կուտայ փորը և տղան ողջ-ողջ դուրս հանելէն ետք, մօրը գրկին մէջ կտոր-կտոր ընել կուտայ, ուրկէ ետքը մայրը 50 դանակի հարւածի տակ կը մեռնի: (Շարժում):

«Պարոններ, այս բաները 95, 96-ին չեն կատարւած, այլ 1900-ին: Դեռ կայ, շատ մը կիներ երախաներ, մարդիկ եկեղեցին պատսպարած էին: Միւսիւլմանները, քրդեր ու զինուորներ եկեղեցիին առջև գարիի և խոտի խուրձեր կը դիզեն, վրան ալ նափթ լեցնելով կրակ կուտան դռան և պատերուն. մեծ մասը հեղձամահ եղած են. գիակներն իսկ չեն խնայած. կտոր-կտոր ըրած և բռնաբարած են. անոնց վրայ, որոնք դեռ կը շնչէին, անլուր բարբարոսութիւններ գործւած են»:

Պ. Ռուանէ մէկիկ մէկիկ թւելով այն գիւղերը, որոնք զոհ եղած են, կը շարունակէ:

«Ասոնք բոլորը, պարոններ, երկու օրւան մէջ եղած են: Կը հարցնեմ, ասոնք կոտորած են թէ մասնակի ոճիրներ: Աւագակներուն գնալէն ետք, բնակիչները կը վերադառնան, մեծ փոս մը կը փորեն և կը թաղեն իրենց ծնողները ու ցիրուցան հայրենակիցները: Բայց 1895-ի քննութենէ յայտնի է որ, կոտորածներուն հետքը սրբելու համար, միւսիւլմանները կը հանեն գիակները հողին մէջէն, զայն այրել մոխիր ընելու համար: Յետոյ բռնի ստորագրել կուտան Մատինի Առաքել վարդապետին և ուրիշ կարգ մը սարսափահար հայերու,

յայտարարութիւն մը, ուր ըսւած է որ Սպաղանք յեղափոխականներ ապաստանած և զինուորներուն վրայ յարձակած ըլլալով՝ վերջիններս ինքզինքնին պաշտպանած են: 16 յեղափոխական սպաննւած է, կ'ըսեն, երեք գիւղացի ալ սխալմամբ սպաննւած են:

«Կը հարցնեմ արտաքին գործոց Պ. Նախարարին անգամ մըն ալ թէ իրաւիրաւի այս կարգի բնաւորութիւն ունեցող արարք մը մասնակի արարք կարելի է նկատել: Ոչ, պարոններ, 1892-93-ի կրկնութիւններն են ասոնք: Եւրօպան անատեն լուր չունէր. քանի մը տարի ետքը իմացաւ անցած դարձածը. երբ 96-ի միահամուռ կոտորածով ուղեցին հայ ազգաբնակչութեան վերջ տալ, այն ատեն ամէն տեղ ապշութիւն, զայրոյթ պատճառեց, այնպէս որ ամէն երկրի մէջ բոլոր մարդոց գիտակցութիւնը թունդ հանեց: Կ'ուզէի մանաւանդ գիտնալ թէ ի՞նչ կը մտածէ Պ. Նախարարը ներկայ կացութեան մասին ի՞նչ միջոցներ կուզէ ձեռք առնել 94-96-ի իրերուն վերադարձի առջև առնելու համար. այս բաները պարտք կը համարիմ մատնանիշ ընել խորհրդարանին, զի արտաքին գործոց Պ. Նախարարը երբեմն աւելի լաւ գիտէ այս բաներու մասին, մամուլը կը լռէ, հաճոյակատար, եթէ ոչ մեղսակցօրէն: (Շատ լաւ, շատ լաւ ծայրագոյն ձախակողմէն): Այդը թող չի գան մեզի ըսեն նորէն, ինչպէս ըսին 1897-ին, որ Եւրօպան ոչինչ ըրաւ՝ զի Եւրօպան չնախատեսեց ջարդերը, որովհետեւ կացութիւնը չէր գիտեր. իրաւընէ կացութիւնը սարսափելի է այսօր, ինչպէս երէկ: Անտանելի է ան և չի կրնար երկարաձգուիլ առանց մեծ աղէտ մը առաջ բերելու: (Շափահարութիւններ ձախակողմէն):

Կարգացի հայ քահանայի մը տեղեկագիրը, որ կերպով մը համառօտութիւնը կ'ընէ ինչ որ կայ կսկծալի և յուսահատական այս դժբախտ ժողովուրդի հոգուն մէջ»:

Ատենախօսը կը կարդայ Խարզանի կողմերէն եկած հայ քահանայի մը սրտաճկիկ նամակը, որ կը նկարագրէ հայ գիւղերու աւերած վիճակը և կուլայ իր սիրական զաւկին, իր կնոջմով և հինգ զաւակներով թուրքըցնելին:

«Իսլամը կամ մահ. այդպէս է Թիւրքիոյ հետեւած քաղաքականութիւնը՝ զոր յղացած է սուլթանը և իր վերին տեսչութեան տակ կը կիրաւուի, բարբարոս և վայրագ միջոցներով, ուրկէ միայն կարելի է ետ կեցնել, եթէ արեւմտեան ազգերը կարեկից ահանջ դնեն զդժբախտ հայերուն դէպի իրենց արձակած աղաղակներուն:

«Երբ վերջի նոյ. 4-ին, արտաքին գործոց Պ. Նախարարին ուշադրութիւնը հրաւիրեցին այդ մասին, պատասխանեց. «Բայց խնդիրը եզականօրէն դժուար է լուծել: Ոչ մէկ տեղ հայերը մեծամասնութիւն են, երկրին անսահման տարածութեան մը վրայ ցրւած՝ գրեթէ ամէն տեղ փոքրամասնութիւն են»:

«Բայց Պ. Տէլքասէ ուշադրութիւն չէ ըրած, թրքական կամայական բաժանումներուն, որով թիւրք վարչութիւնը ձեռնարկեց խեղդել հայերը՝ օտարոտի տարրերու մէջ. բայց բնական աշխարհագրական բաժանումները սուլթանի իրատեղի չի ջնջեցան: Կը յիշեմ միայն Վանի վիլայէթը, ուր միւսիւլմանները (թիւրք. քիւրդ) 61,000 են, մինչ հայերը 64,000 և 6,000 ալ զանազան ցեղի կամ կրօնի պատկանողներ:

«Արդարեւ անվիճելի է որ, Մուշի սարահարթին, Սասունի հովիտներուն, Զէյթունի կիրճերուն մէջ, կայ ժո-

ղովուրդ մը, որ գիտակցութիւն ունի իր գոյութեան, ժողովուրդ մը, որ կը հոգեւարի, կը մեռնի և որ Եւրօպայի օգնութիւնը և աջակցութիւնը կը խնդրէ: (Շատ լաւ, շատ լաւ, ծայրագոյն ձախակողմէն):

«Հիմակ, արտաքին գործոց Պ. նախարարը պիտի գայ ըսել, որ Քրանսան Պերլինի դաշնագրութիւնը իբր ստորագրող, 6-րդ կամ 7-րդ բաժին ունի Եւրօպայի այս ժողովրդին երաշխաւորութեան մէջ: Նախապէս կը պատասխանեմ որ, այս տեսակ հարցի մէջ, Քրանսան ոչ միայն իր անցեալով, իր աւանդութիւններով, այլև իր քաղաքական շահերու բնութեամբ իսկ, անմիջապէս կարող է միջամտել:

«Եւրօպական ազգեր, կան, որոնց միջամտութիւնը հայկական հարցին մէջ կասկածներ կրնայ յարուցանել իրենց հողեր տիրելու ցանկութիւնովը, բայց Քրանսան հոն բնաւ հողի աչք չունի. ինք միայն Հայաստանի մէջ, մարդասիրական, քաղաքակրթութեան և արդարութեան շահ մը ունի: Ես կ'ըսեմ որ, ասիկայ էն առաջ, գերազանցօրէն Քրանսական շահ մըն է:» (Ծափահարութիւններ ձախակողմէն):

Պ. Ռուսնէ կը կարգայ հայ ուսուցչի մը Պ. Քիյառի ուղղած մէկ նամակը, որուն մէջ հայ ուսուցիչը երբ կը պատմէ իր աշակերտներուն Քրանսայի յեղափոխութեան մեծ և փրկարար դերը, աշակերտները զարմացած և թերահաւատ կը հարցնեն. «Այն Քրանսան, որու մասին դուք կը խօսիք, գոյութիւն չունի՞ այլևս»:

«Պարոններ, Քրանսայի անունը մինչև հոն՝ հեռուները հասած է իբրև ազատարար, և իբրև իրաւունքի պաշտպան ազգ: Կը հարցնեմ արտաքին գործոց պ. նախարարին, ըսել մեզի թէ ի՞նչ ըրաւ այս պարագային մէջ հայերուն համար, արդարութեան համար, մարդկութեան համար, քաղաքակրթութեան համար, այսինքն Քրանսայի համար:» (Ծափահարութիւններ ծայրագոյն ձախակողմէն):

Պ. Տը Պօտրի Տասօն. — Ոչինչ, ոչինչ, բացարձակապէս ոչինչ:

Պ. Նախագահ. — Խօսքը արտաքին գործոց պ. նախարարինն է:

Պ. Տէլքասէ. — Պարոններ, Տիար պ. Ռուսնէ պէտք եղածին չափ տաղանդ ունի, և այն դատը, զոր հիմակ պաշտպանեց բաւական համակրելի է, քանի որ մարդասիրական է. բայց կառավարութեան Արևելքի մէջ բռնած դիրքէն պէտք չէ եղբակացնել երևակայական հակասութիւններ ու փաստեր, զորս անձիշդ կը կարծեմ:

«Կը զարմանամ որ մեր յարգելի պաշտօնակիցը Քրանսայի Արևելքի նոր գործունէութեան մէջ նիւթական շահերու պարզ պաշտպանութիւն մը կը տեսնէ միայն: Օտարները աւելի պայծառատես և աւելի արդարադատ, անոր մէջ տեսան աւելի լայն և բարձր հասողութիւն մը: Այն պաշտօնին վերեւն, ուր ես դրած եմ, և ուրկէ աչքը կ'ընդգրկէ ազգային շահերու ամբողջութիւնը, իր բոլոր պարտականութեան գիտակցութիւնը ունեցող նախարար մը, իր ճաշակը կամ իր նախասիրութիւնները լիացնելու համար չէ, որ խորհուրդ կը հարցնէ: Եւ երկրին համար դժբախտութիւն մը պիտի ըլլար, եթէ համոզւած ըլլալով որ ազգու գործողութիւն մը հարկ է, այս նախարարը ընկրկէր, խորհելով որ իր գործողութեան առեւտրութեմ կամ վերջին շարժառիթը համակրութիւն պիտի չգտնէր ամէնքէն:

«Տիար պ. Ռուսնէ ցաւ յայտնեց, որ հայկական հարցը բարձրացնելու համար, չ'օգտուեցանք օսմանեան ջրերու մէջ մեր նաւատորմին ներկայութենէ:

«Հաւանօրէն արտաքին գործոց պիւտճէի քննութեան ընթացքին, առիթ պիտի ունենամ բացատրելու, որ Քրանսական գործունէութիւնը օսմանեան ջրերուն մէջ այն ատեն պէտք էր դադրէր, չէնց որ դադրէր լոկ Քրանսական պատճառը, որ այդ գործունէութեան տեղի տուաւ: Միւս կողմէ նոր բան մը ըսած չեմ ըլլար, երբ հաստատեմ որ, հայկական և Հայաստանի ապահովութեան հարցը, ինչպէս նաև Մակեդոնիոյ մէջ, անանկ հարց մը չէ որ Քրանսան մինակ կարող ըլլայ կարգադրել Թիւրքիոյ հետ: Եւսպէս միջազգային հարց է, որու մասին Թիւրքիան Պերլինի վեհաժողովին մէջ, տէրութիւններուն դէմ, երաշխաւորութիւններ յանձն առաւ, որոնցմով Քրանսան չի շահագրգռէր չէ, և կը յուսայ որ պետութիւնները անոնց վրայ պատեհ պիտի դատեն իրենց մասնաւոր ուշադրութիւնը դարձնելու: (Շատ լաւ, շատ լաւ):

Պ. Էտոուար Վալեան. — Պէտք է անոնց ուշադրութիւնը հրահրել:

Արտաքին գործոց նախարարը. — Բայց հայկական հարցը խառնելով Քրանքօ-Թիւրք վեճին՝ Եւրօպային իրաւունք կուտայինք մէջ մտնելու, ուրկէ հարկ էր որ զգուշանայինք. պիտի երկարէր խնդիրը, մինչ յայտնի է որ այս վեճը շանս ունէր վերջը լաւ ըլլալու, այսինքն արագ կերպով վերջանալու: Ասիկայ պիտի կըրկնապատկէր մեր դժուարութիւնները, առանց սակայն հայերուն կացութիւնը բարելաւելու:

«Շատ ստոյգ է—ինչպէս ըսած էի քանի մը շաբաթ առաջ—կացութիւնը այն չէ, ինչոր կը խորհէր Եւրօպան Պերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածով, և կը պարտաւորէր Թիւրքիան «Հայաբնակ նահանգներուն մէջ գործադրել հարկաւոր բարենորոգումները և մանաւանդ երաշխաւորել անոնց ապահովութիւնը չէրքէզներուն ու քրդերուն դէմ»:

«Ճիշդ է նաև որ—Պ. Ռուսնէ գիտնալու է այդ պատմութիւնը—երբ խնդիր եղած է որոշում մը տալ թէ ի՞նչ պէտք էր ընել երբ Ռուսը չգործադրէ իր խոստումները, Պերլինի վեհաժողովը վարանեցաւ. նիստերու ատենագրութիւններու ընթերցումը կը յայտնեն այդ վարանումին պատճառը: Աւելորդ է բացատրել խորհրդարանին թէ ինչո՞ւ վեհաժողովը չուզեց «ընդունիլ որ ունէ պետութիւն առանձնակի միջամտէ 61-րդ յօդուածի գործադրութեան», այն բացայայտ վախով որ «իրարու մէջ ծանր անհամաձայնութիւններ չի գրգռեն» և նաև արգիլեն որ պետութիւնները «իհարկին համեմաշխօրէն ուժ չգործածեն», նոյնիսկ դիւանագիտական և հաւաքական գործողութիւն չի պայմանադրեցաւ, և վերջապէս համաձայնեցան յայտարարելու որ «Ռուսը պարբերաբար, ձեռք առնւած միջոցներու մասին, տեղեկութիւններ պիտի տայ, որոնց կ'իրաւման պիտի հսկեն տէրութիւնները:

«Այսպէս, պարոններ, ըլլայ ճշողական, անհատական կամ հաւաքական կերպով՝ բարձրացնել հարցեր, որոնց կարգադրութեան համար պատրաստութիւն չի կայ, կամ անոնց լուծումը եթէ ստացւի ալ կարող է ընդհանուր տիեզերաբորբոքում առաջ բերել: Ո՞վ կրնայ չափել այս երկրպագութիւնը 1894, 95-ի, և 96-ի Հայաստանի և Պօլսոյ դէպքերուն մէջ:

«Բայց այս դեպքերը նոր կացութիւն մը ստեղծեցին, և մարդ կը հարցնէ ինքնիրեն որ անոնց վերադարձը չի պիտի բարձրացնէ, չի պիտի դնէ մէջտեղ իրենց բոլոր կծուութեան մէջ, այն զարհուրելի հարցերը, որոնցմէ իմաստունօրէն կուզէր խուսափելը Անոնց վերադարձի սպառնալիքն իսկ, հարցը մէջտեղ դնելու բնոյթը ունի: Կը թւի թէ ճակատագրական է որ ժողովուրդները, որոնց ինչքեքը թոյլ կուտան որ անպատիժ կերպով թաւանելին և անդադար անպատիժ ոճիրներու և սպաննուածութիւններու ենթարկուած տեսնեն ինքզինքնին, ըսեն վերջապէս որ, ամէն բան լաւագոյն է քան թէ ջարդակոտորածի մղձաւանջին տակ շարունակել այս տեսակ կեանք մը ապրիլը:

«Ասոր համար, ընդհանուր խաղաղութեան ինչպէս և մարդասիրութեան հոգածութիւնով, Ֆրանսան, վերջի տարիներս, ջանացած է կասեցնել չարիքները, որոնք արժանի է, որ աւելի ու աւելի զբաղեցնեն քաղաքագէտներու մտքերը, երբ հանրային գիտակցութիւնը երթալով նազ անտարբեր կ'ըլլայ (Շատ լաւ, շատ լաւ):

«Թիւրքիոյ հետ մեր նոր վեճը, ուրկէ ոչ նազ կ'օգտւին հայերը, և առաջինը հայերը իրենք են հաստատողը, որ մեր կորովի վարմունքը կասեցուցած է իրենց գլխուն վրայ բարդած սպառնալիքներու գործադրութիւնը»:

Պ. Յէլքասէ կը կարդայ Հայաստանէն իրեն ուղղած ծանօթ հայու մը հետեւեալ նամակը, որուն անունը չուզեր տալ՝ սուլթանի բարկութեան ու վրէժխնդրութեան չմանելու համար:

«Կոտորածներէն ազատ մնացինք չնորհիւ գետապաններու ազդարարութիւններուն եւ ֆրանսական կառավարութեան դիւանագիտական յարաբերութիւնները խզելուն, որուն բռնած ազգու դիրքը կենդանի տպաւորութիւն առաջ բերաւ»:

«Վտանգէն ազատ մնալու համար, հայերը ինչպէս և կայսրութեան միւս մասերուն մէջ չարչարած տարրերը, տէրութեանց միջամտութեան կը նային: Անոնք, որոնք կը կարծեն որ այս միջամտութենէ հետ բան չի կայ, թող հաճին կարգաւ Պերլինի Վեհաժողովին պատմութիւնը, թող մտածեն նաև այն բազմապատիկ, փափուկ, ծանր հարցերու մասին, զոր կրնայ յարուցանել այդ միջամտութիւնը, և սակայն Չինաստանի մէջ անոնց միջամտութեան օրինակը, ուր, հակառակ այնքան պատճառներու ու պատրաստութեան, թիւրիմացութիւններու և գրգռութիւններու, պետութիւնները պահեցին իրենց միութիւնը, թոյլ կուտայ մեզ խորհելու որ նմանօրինակ ճիգ մը իրենց բարի կամքէն վեր չի պիտի ըլլար: (Շատ լաւ, շատ լաւ):

«Խնդիրը մանաւանդ սուլթանէն, իր իշխանութեան ենթարկեալ այս ինչ կամ այն ինչ ցեղին համար առանձնաշնորհումներ ձեռք բերելուն վրայ չէ, որպէս զի այդ ցեղն ալ ուրիշ դրացի ցեղ մը կեղեքէ, այլ...

Պ. Ռուսն է. — Ապրելու առանձնաշնորհ մը:

Պ. Տէլքասէ. — Այլ կայսրութեան բոլոր ժողովուրդներուն համար, առանց կրօնի և ցեղի խտրութեան, ձեռք բերել արդար վարչութիւն մը և անաչառ արդարութիւն մը. (շատ լաւ, շատ լաւ) հարկ է որ ապահովութիւն ձեռք բերուի, որ ոչ նազ հարկաւոր է Թիւրքիոյ կեանքին, ինչպէս Եւրոպայի անդորրութեան համար: (Շատ լաւ, շատ լաւ):

«Ինչ ձեռքով որ կուզեն թող միջամտեն պետութիւնները, միահամուռ թող դիմեն սուլթանին կամ նախնարեն զատ զատ խօսիլ անոր. իրենց լեզուն պիտի լսէր, և թէ այդ լեզուն մէջ միասին ամէնքին համոզումը և բաւական ուժեղ որոշումը կայ, որ կրնայ բաժանելու ամէն յոյս դերեւ հանել:

«Իմ խելքով, քաղաքական բարձր նախատեսութեան, ինչպէս և մարդկային համերաշխութեան գործ մըն է ասիկա: Եւ այսօր ոչ ոք կը տարակուսի թէ, Ֆրանսան, որ իր միակ ընելիք բոլոր դիմումները կ'ընէ, պատրաստ է գործօն կերպով աշխատակցիլ այդ բանին, համոզւած ըլլալով որ ինք Թիւրքիոյ անկեղծ բարեկամ կուզէ ըլլալ, յիշեցնելով անոր որ պետութիւն մը չի քանդեր կամ չի թողուր որ անպատիժօրէն քանդեն ընդերկար իր բուն գոյութեան իրաւունքները: (Ծափահարութիւններ բազմութիւն նստարաններէ):

Պ. Ռուսն է. — Պարոններ, միտքս գէշ բացատրեցի. ես չուզեցի ըսել որ Ֆրանսան Թիւրքիոյ վրայ նոր ձեռնում բանեցնէ: Ես հարցուցի միմիայն թէ, ֆրանսական կառավարութեան նախաձեռնութեամբ, թրքական ջրերը ուղղւած մեր նաւատորմը ուէ աստիճան, սուլթանը իր ջարդումի ծրագիրներէն ետ կեցնելու հրահանգ չունէր. հարցուցի նաև թէ պ. նախարարը, իր ազգայիններու նիւթական շահերը յարգել տալով մէկտեղ պաշտպանած էր մեր բարոյական հայրենական ժառանգութիւնը և ի՞նչ ըրած էր այդ ժառանգութեան պահպանման համար: Կը ցաւիմ ըսել որ պ. նախարարի լեզուն բացարձակօրէն բացասական է:

«Թերեւս ճիշդ է որ մեր նաւատորմին օսմանեան ջրերուն մէջ ներկայութիւնը կոտորածները արգիլած ըլլայ և այս իսկ ապացոյց մըն է որ, սուլթանը հեշտութեամբ կարելի է խելքի բերել: Հայերը կրնան, պ. նախարար, երախտագէտ ըլլալ ձեզի, շատ բնական է, բայց կը հարցնեմ ձեզի, խողխողումի նւիրած այս թշուառ ժողովրդին ապագայով մտառանջաւոր էք երբէք: Ի՞նչ պիտի ըլլայ վաղը:

Մենք հոկտեմբերի վերջերը և նոյեմբերի սկիզբները օսմանեան ջրերու մեջն էինք, անկէջ իվեր ձմեռը վրայ եկած է, գիւղերը ձիւնի տակ թաղած, Հայաստանի մէջ հաղորդակցութիւնները կտրած են. 1901-1902-ի ձմրան մէջ, ինչպէս 1893-94-ին, թրքական նոր ողբալի արշաւանքներ չեղան, զի հաղորդակցութիւնները կտրւած են:

«Բայց ինչ որ ահարկու է, ան է որ, սուլթանը ըսպէ մը վախճալով մեր նաւատորմին ներկայութեան, կը դադարեցնէ կոտորածները, վաղը նորէն կըսկսի, զի Ֆրանսայի դրած պահանջներուն մէջ չկայ կէտ մը, որ իր հրամանով և գրգռմով եղած գործերուն համար պատասխանատու բռնի, և սուլթանը ընդհակառակը իրեն քաջաբերութիւն մը կը տեսնէ:

Պ. Ռուսն է Վիվիանի. — Շատ լաւ:

Պ. Կ. Ռուսն է. — Պ. նախարար, կիսապաշտօնական ծանուցագրի մը համաձայն, զոր մեզի ցրել տւիք, դուք հոգածու եղած էք կաթոլիկ, լատին և քաղդէական եկեղեցիներուն համար:

Պ. Տէլքասէ. — Եւ դպրոցներուն համար:

Պ. Կ. Ռուսն է. — Այո, դպրոցներուն համար ալ. քանի մը լատինադաւան եկեղեցիներ, որոնք հայոց ժամերուն հետ սխալմամբ քանդած էին, պիտի վերաշինուին: Բայց այն անթիւ ժամերը, ուր հայերը ապաստանեցան

և քարիւղով այրեցան, որոնք լատին խաչին պաշտպանութիւնը չեն կրեր. ինչո՞ւ այդ խտրութիւնը...

«Ինծի սոսկում կազդէ, պարոններ: Այո, մեր միջամտութիւնը Արեւելքի մէջ կրցաւ կասեցնել ջարդերը, բայց կարճատե պիտի ըլլայ ան: Հէնց իմացան որ հայերու կոտորիչները անպատիժ կը մնան, սուլթան Համիդի դահիճները յարձակումը պիտի վերսկսին քրիստոնեաներուն վրայ: Եւ այն կարճատե դադարը պիտի փոխարինւի լայնօրէն, դահիճները աւելի եռանդ գնելով իրենց շահատակութեան մէջ:

«Կը վախճամ որ, մէկ խօսքով, 1902-ի գարնան Հայաստանը 1895-ի կացութեան մէջ չիյնայ (շատ լաւ, շատ լաւ ձախակողմէն): Միայն թէ առաջ, ոչ եւրօպական մամուլը և խորհրդարանները նախապէս չէին գիտեր, այս անգամ Եւրօպան առաջուց գիտէ և եթէ 1896-ի աղէտները վերանորոգէին, Եւրօպան ուղղակի պատասխանատու է: (Ծափահարութիւններ ծայրագոյն ձախակողմէն):

Ճառը վերջանալուն՝ նախագահը կը ներկայացնէ երեսփոխանական ժողովին երկու օրակարգ. պ. Ռուսները սպաւէս է.

«Սորհրդարանը յոյս դնելով կառավարութեան վրայ, Եւրօպայի ուշադրութիւնը հրաւիրելու համար սուլթանին ստանձնած երաշխաւորութիւններու ակնհեռ բռնաբարութիւն վրայ, կանցնի օրակարգին»:

Պ. Տ ը ն ի ս Կ օ շ է ն. — Կուզեմ ինպատակ պ. Ռուսներէ օրակարգին խօսք մը ըսել:

«Զեմ հասկնար թէ ինչու կառավարութիւնը չպիտի ընդունի զայն: պ. նախարարի զարհուրելի խնդիրները, զոր կրնայ յարուցանել միջամտութիւն մը, այնքան վտանգ չեն սպառնար:

«Արեւելեան հարցը Եւրօպայի հանգստութեան համար մշտական սպառնալիք մը եղած է. բայց այն վտանգները, որոնք կրնային առաջ գալ Արեւելքի մէջ միջամտութեամբ մը, քաղաքական ընդհանուր պատճառներով, այժմ նազ սպառնալիք են: Փառք Աստուծոյ. խնդիրները անոնցմէ են, որոնց լուծումը Եւրօպան շատոնց ձեռք բերած է, պէտք է միայն գործադրել:

«Այդ լուծումը Պերլինի դաշնագրութեան մէջ իսկ է. չէ՞ որ սուլթանը ժամանակ ժամանակ Հայաստանի մէջ կատարած բարենորոգումներու մասին տեղեկութիւններ պիտի տար. հաշիւ տա՞ծ է այս բարենորոգումներու մասին, գործադրած է երբէք, աւելի բացայայտ կերպով պահանջա՞ծ է: (Հատ լաւ, շատ լաւ աջակողմէն):

«Մենք չենք պահանջեր զարհուրելի հարցեր հանել, թիւրքիան բաժնել. չէ՞: Հերիք է որ գործադրեն դաշնագրութիւնը, որ կ'ըսէ թէ Եւրօպայի պատելին համար, այլեւս չպիտի պատահին անկարգութիւններ, սարսափներ, որոնց մինչև հիմա մենք հանգիստտես եղանք: Մենք ձեզմէ նոր բան չենք պահանջեր. յուսով ենք, որ պիտի աշխատիք իրագործել, ինչ որ վաղուց ծանօթ է, և ձեռք բերէք շատոնց որոշած խնդրի մը կարգադրութիւնը: Նոր և վտանգաւոր բան չի կայ հոս: Մենք յոյս ունինք ձեր վրայ, ասոր համար ձեզի ներկայացուած օրակարգը ձեզ խանգարելու չէ բնաւ:

«Զորս տարի է, ահռելի բանտի մը մէջ առանց դատաստանի բանտարկւած չորս հայերէ նամակ մը ունիմ, կրնաք կարգաւ զայն և պիտի տեսնէք որ երկար ատենէ իվեր անտեսուած պայմանները գործադրելու տեղի կայ:

(Ծափահարութիւններ աջէն և զանազան նստարաններու վրայ):

Ներկայացուած երկու օրակարգերը քւէի դրելով պ. Ռուսներէ բանաձեռ ստացաւ 235 ձայն, Պ. Տէլքասէի յայտարարութեան ինպատակ բանաձեռ յաղթեց 280 մեծամասնութեան ձայնով:

Պ. Տ ը ն ի ս Կ օ շ է ն. — Հազարէն մէկ անգամ յոյս ունէի կառավարութեան վրայ, ան ալ չի յաջողեցաւ:

ՕՍՄԱՆԳԻ ԱԶՈՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Համաժողովի գործունէութեան այս ամփոփումը խմբագրւած է Դրօշակեան եւ Հնչակեան պատգամաւորներին համաձայնութեամբ: Ներկայ օրինակը ուղարկւած է մեզ Պարիզից տպագրելու համար:

Օսմանցի ազատականների համաժողովը, որ կազմակերպած էին Տամատ-Մահմուդ փաշայի երկու որդիներ, իշխան Սարահտին և իշխան Լուծֆուլահ իր նիստերն սկսեց Պարիզում փետրուար 4-ին:

Կազմակերպողները հրաւեր էին ուղղել Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրգան՝ «Դրօշակի» խմբագրութեան և «Հնչակ» թերթի խմբագրութեան: Այս վերջինը չէր պատասխանել, իսկ «Դրօշակի» խմբագրութիւնը և Վերակազմեալ Հնչակեան յեղափոխական կուսակցութեան կեդր. վարչութիւնը իւրաքանչիւրն երեքական պատգամաւոր էին ուղարկել համաժողովին մասնակցելու համար:

Ֆրանսիական կառավարութիւնը նախ արգելեց համաժողովի գումարումը, բայց մի խումբ ազդեցիկ երեսփոխանների և քաղաքական անձնաւորութեանց դիմումների վրայ, թող տւեց, որ այն տեղի ունենայ մասնաւոր անհատի տան մէջ և պայմանով՝ որ նրա արձանագրութիւնը հրատարակելուց առաջ ֆրանսիական կառավարութեան հաղորդւի:

Դրօշակեան և Հնչակեան պատգամաւորները անհրաժեշտ համարեցին մասնակցելուց առաջ իրար հետ համաձայնել իրենց բռնելիք ուղղութեան մասին և ունեցան նախնական խորհրդակցութիւններ, ուր որոշեցին համաժողովի ամբողջ ընթացքի մէջ համախոհաբար գործել: Դրօշակեան և Հնչակեան պատգամաւորները այդ որոշման հաւատարիմ մնացին համաժողովի սկզբից մինչև վերջը և այսպիսով ազատական օսմանցիները տեսան ոչ թէ երկու կուսակցութեանց ներկայացուցիչներ՝ այլ վեց հայեր՝ ներկայացուցիչ հայկական դատի:

Համաժողովին մասնակցելուց առաջ Դրօշակեան և Հնչակեան պատգամաւորները նախապատրաստական տեսակցութիւններ ունեցան նաև երկու իշխանների և Իսմայիլ Բէմալ Բէյի հետ և այն ժամանակ միայն իրենց վերջնական համաձայնութիւնը տւին համաժողովին պաշտօնապէս մասնակցելու, երբ տեսան, որ համաժողովի կազմակերպիչները ամբողջութեամբ ընդունում են հայոց ծրագիրը՝ այսինքն 61-րդ յօդուածի, ինչպէս և 1895 մայիս 11-ի մեմօրանդումի անգլիական յաւելւածով հանդերձ՝ գործադրութիւնը:

Համաժողովին մասնակցելու հրաւիրւած էին նաև մի քանի պարիզաբնակ հայեր, որոնցից պպ. Զերազ և Բաս-

մաջեան միայն պատասխանել էին այդ հրաւերին: Յիշեալ երկու պարոնները համաժողովում յայտարարելով հանդերձ, որ իրենք չեն պատկանում ուէ յեղափոխական կուսակցութեան, յայտնեցին՝ թէ իրենք յարում են այն յայտարարութեան, որ Դրօշակեան և Հընչակեան պատգամաւորները ներկայացրին համաժողովին:

Ազատական օսմանցիներից ներկայ էին երեսունի չափ անձեր, որոնց մէջ պէտք է յիշել Պէշկէթեթի՝ խմբագիր Ահմէթ-Քիզաբէյը իր Հալէլ-Պանեմ և Ալպէր-Ֆիւա աշխատակիցներով, Հօջա-Պաղրին, Պօմանլի՝ թերթի խմբագիր Կսիտօր Ալբէր, Փահրի բէյը, Միտհաթ փաշայի որդի Ալի-Հայդար բէյը, Պ. Պ. Սաթաս, Միւզիւրիս-Պիկիս և Թօրթ-Պօրիս յոյները, Պալանիա՝ թերթի խմբագրապետ պ. Դերվիշ Հիման ալբանացին, Պիւրդիստան՝ թերթի խմբագիր Արդիւրահման բէյ Բէդէրիսան քիւրդը և այլն:

Համաժողովն ունեցաւ վեց նիստ, որոնցից առաջին երկուսը գումարեցան պ. Լըֆէվր-Պօնտալիսի բնակարանում և վերջին չորսը Սաբահետին և Լիւթֆուլահ իշխանների տանը:

Համաժողովն իրեն նախագահ ընտրեց Սաբահետին իշխանը, փոխնախագահ հայ պատգամաւոր պ. Սիսեանը և յոյն պատգամաւոր պ. Սատասը, քարտուղար՝ զօկտօր Ալբէրը և նրա հրաժարելուց յետոյ պ. Թօրթ Պօրիսը:

Իմանալով որ որոշած էր համաժողովի լեզուն թիւրքերէն ընդունել, Հնչակեան և Դրօշակեան պատգամաւորները առաջուց պահանջել էին կազմակերպիչներից, որ Ֆրանսերէնը գործածել իբրեւ համաժողովի պաշտօնական լեզու, բայց նկատելով որ օսմանցի անդամներէն շատերը Ֆրանսերէնին անտեղեկ են, համաձայնեցին, որ երկու լեզուները գործածելն հաւասարապէս, այսինքն թէ իւրաքանչիւր Ֆրանսերէն ատենաբանութիւն թիւրքերէն թարգմանի և փոխադարձաբար:

Համաժողովի սկսելուց առաջ Դրօշակեան և Հնչակեան պատգամաւորները զարմանք և ցաւ էին յայտնել, որ մակեդոնական երկու կոմիտէներին հրաւեր ուղարկած չէ և պահանջել էին այդ հրաւերն ուղղել նրանց: Կազմակերպիչները առարկութիւն արին մակեդոնական ուրոյն հարցի գոյութեան դէմ, բայց հայ պատգամաւորների պահանջի վրայ համաձայնեցին այդ հրաւերն ուղարկել Պրօշակի՝ խմբագրութեան միջոցով, իբրեւ պահանջ թիւրքերի բուլղարներին: Իրենց հրաւերը անպատասխան մնաց: Համաժողովի սկսելուց անմիջապէս յետոյ հայ պատգամաւորները հրապարակաւ բողոքեցին մակեդոնական խնդրի հանդէպ օսմանցի ազատականների բռնած դիրքի դէմ և ցաւ յայտնեցին, որ մակեդոնական կոմիտէների ներկայացուցիչներ չեն գտնուում համաժողովում և այդ յայտարարութիւնը իրենց պահանջով ատենագրութեան մէջ արձանագրեց:

Սաբահէթին իշխանը հետեւեալ որոշումները կարգաց և առաջարկեց համաժողովի անդամների բւեարկութեանը:

1) Մերժում ենք ամէն մի համերաշխութիւն օսման համաժողովուրդների և այն ղեկավար միջեւ, որի ներքեւ ապրում ենք քառասունհինգ տարիներից ի վեր. հարստահարութեան ղեկավար, որ միակ աղբիւրն է կայսրութեան մէջ գործող շարագործութեանց և որոնք բովանդակ մարդկութեան զայրոյթն են գրգռում:

2) Մենք ձգտում ենք կայսրութեան այլեւայլ ժողովուրդների և ցեղերի մէջ հաստատել մի համաձայնութիւն, որ առանց խտրութեան ամէնքին պիտի ապահովի լիակատար վայելումն իրենց իրաւունքների, որոնք կայսերական հալածելով և միջազ-

գային դաշնագրով ներառործւած են և իրենց միջոց պիտի հայթայթի տեղական վարչութեան մասնակցելու իրենց օրինաւոր քաղաքացի անձանց զոհանքները. նրանց պիտի ղնի հաւասար աստիճանի վրայ՝ բոլոր քաղաքացիների իրաւունքի և պարտքի տեսակէտով. նրանց պիտի ներշնչէ հաւատարմութեան և անձնիրութեան զգացումը դէպի օսման հանր և ղրխաստին, որ միայն կարող է պահպանել նրանց միութիւնը:

3) Զանազան պիտի լինեն ամէն առթիւ օսման համաժողովուրդների իղծերը և բոլոր հայրենասէրների ջիգերը համախմբել դէպի այս երբեակ նպատակը՝ ա) Պահպանել օսման պետութեան ամբողջութիւնն ու անլուծելիութիւնը. բ) Երկրի ներքին գործերի մէջ վերահաստատել կարգաւորութիւն և խաղաղութիւն, էական պայման յառաջադիմութեան. գ) Յարգել պետութեան հիմնական օրէնքները, մասնաւորապէս 1876-ին հաստատւած սահմանադրութիւնը, որ նրանց ամենակարեւոր մասն է և որ ամենից ապահով և ամենաթանկագին գրաւականն է ներկայացնում ընդհանուր քաղաքացիութեան, օսման համաժողովուրդների քաղաքական ազատութեանց և իրաւունք ընդդէմ՝ կամայականութեան:

4) Հռչակում ենք մեր հաստատուն որոշումը՝ յարգել միջազգային դաշնագրերը և մասնաւորապէս Բերլինի դաշնագիրը, որի տրամադրութիւնները, Թիւրքիայի ներքին կարգաւորութեան վերաբերեալ, պէտք է տարածելն պետութեան բոլոր նահանգների վրայ:

Եզրակացութիւն.

Սրանք լինելով այն սկզբունքները, որոնց վրայ հաստատւած է համաձայնութիւնը, կազմում ենք մի մշտական կոմիտէ, որ պիտի ջանայ այս սկզբունքներն իրականացնել և պիտի անի հարկաւոր դիմումները 1866 թ. Պարիզի դաշնագրի և 1876 թ. Բերլինի Դաշնագրին ստորագրող պետութիւններին նրանց բարոյական աջակցութիւնը և նրանց կողմից բարեսցակամ գործողութիւն առաջ բերելու համար, իրեն նպատակ ունենալով գործադրել Տաճկաստանի ներքին կարգաւորութիւնը պայմանաւորող միջազգային յանձնարարութիւնները ինչպէս և վերոյիշեալ դաշնագրերէն թողող բոլոր միջազգային որոշումնագրերը և նրանք պատշաճեցնել պետութեան բոլոր վիլայէթներին նրանցից իւրաքանչիւրին ամենաօգտակար եղանակով:

Հայ պատգամաւորները յայտարարեցին որ չպիտի բւեարկեն այդ որոշումները, որոնց ինչ ինչ կէտերին համաձայն չեն և ծանուցին թէ իրենք զուգընթաց մի յայտարարութիւն պիտի ներկայացնեն համաժողովին: Դիտել տւին մասնաւորապէս, թէ հայերը կը ցանկանային Տաճկաստանը դէպի դաշնակցական մի ղեկիմ առաջնորդած տեսել, մինչդեռ ազատական օսմանցիների որոշումները կետրօնացման ձուլման, նոյնացման մի ղեկիմ հաստատման են ձգտում: Բողոքեցին մանաւանդ 4-րդ յօդուածի դէմ, որ ասում է թէ Պրիւքի դաշնագրի տրամադրութիւնները, Թիւրքիոյ ներքին կարգաւորութեան վերաբերեալ, պէտք է տարածելն կայսրութեան բոլոր նահանգների վրայ. պարզեցին՝ թէ 61-րդ յօդուածը չի կարող տարածել կայսրութեան ուրիշ նահանգների վրայ, քանի որ այն խմբագրւած է միմիայն հայկական նահանգների տեղական, ցեղային մասնաւոր պէտքերն աչքի առաջ ունենալով. ասացին թէ ազատական օսմանցիներն իրաւունք և նոյնիսկ պարտք ունին ուրիշ նահանգների մէջ տեղական պէտքերին համապատասխանող բարենորոգումներ մտցնել, բայց իրաւունք չունի պետութեան բոլոր նահանգների վրայ տարածումը պահանջել այնպիսի բարենորոգումների, որոնց Եւրօպան պաշտօնապէս միմիայն հայկական նահանգների համար է անհրաժեշտ գտած:

Հայ պատգամաւորները նկատեցին վերջապէս, թէ իրենք չեն կարող ընդունել, որ 1876-ի սահմանադրութիւնը համարէր իրենց ապահով և ամենաթանկագին գրաւականը օսման համաժողովուրդների քաղաքական ազատութեանց և իրաւունք ընդդէմ կամայականութեան, քանի որ հայերը իրերի բնական ուժով և պատմական

դէպքերի դառն փորձերով՝ ստիպւած են իրենց պահանջած և Եւրոպայից պաշտօնապէս ճանաչուած մասնաւոր բարենորոգմանց միակ ապահովութիւնը միջազգային դաշնագրութեանց մէջ տեսնել:

«Եզրակացութիւնը», որի մէջ դրական մտքով էր որոշուած Եւրոպական միջամտութեան խնդիրը, բուն վէճ առաջ բերեց ազատական օսմանցիների մէջ: Այդ որոշումը, որ Խամայիլ-Քէմալ բէյի և Երկու իշխանների ուղղութիւնն է ցոյց տալիս և Տաճկաստանի մէջ բարենորոգմանց գործադրութեան համար Եւրոպայի գործակցութիւնը անհրաժեշտ է նկատում, սաստիկ բողոք բարձրացրեց Ահմէդ Րիզայի և իր կուսակիցների կողմից, որոնք հակառակեցին Եւրոպայի գործուն միջամտութեան հրաւեր կարգաւոր գաղափարին և յայտարարեցին, որ օսմանցիները իրենց երկրի բարենորոգումը իրենց ձեռքով պէտք է կատարեն և իհարկէն Եւրոպայից միմայն բարոյական աջակցութիւն պիտի խնդրեն:

Հայ պատգամաւորները ջերմօրէն պաշտպանեցին «Եզրակացութեան» այդ կէտը, նկատելով, որ Եւրոպական միջամտութեան անհրաժեշտութիւնն ընդունելը մի փրկարար նորութիւն է ազատական օսմանցիների գործունէութեան մէջ, որ այդ միջամտութիւնից նրանք խուսափել էլ չեն կարող, ինչպիսի ունենալով միջազգային այն պայմանները, որոնց ենթարկւած է Թիւրքիան: Այդ որոշումը ընդունեցաւ քէից մեծամասնութեամբ:

Յետոյ համաժողովը ունենդրեց հայ պատգամաւորների յայտարարութեանը, որ հետեւեալն է.

Հնչակեան և Դրոշակեան հայ կոմիտէների պատգամաւորները յայտարարում են.

1) Թէ հայ կոմիտէները պատրաստ են օսմանցի ազատականների հետ գործակցել արդի ընթիւնը կերպարանափոխելու նպատակով ձեռնարկուած ամէն գործողութեան:

2) Թէ այդ ընդհանուր գործունէութիւնից դուրս, հայ կոմիտէները կը շարունակեն իրենց մասնաւոր անկախ գործունէութիւնը, քանի որ ինչպէս յայտնի է այդ գործողութիւնն ուղղուած է արդի ընթիւնը դէմ և ո՛չ Թէ Թիւրքիայի միութեան և գործարանաւորական (օրգանական) գոյութեան դէմ:

3) Թէ իրենց մասնաւոր գործունէութիւնն ուրիշ նպատակ չունի արդէն, բայց եթէ անմիջական գործադրութիւնն առաջ բերել Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի, 1896 թ. մայիս 11 մէծօրանդումի և նրա յաւելածի, ինչպէս և այն բարենորոգմանց ծրագրի, որ յանուն հայ կոմիտէների դիւանագիտական միջոցով Ֆրանսիական կառավարութեան յանձնուած յիշատակագրի մէջ յիշուած է:

Ազատական օսմանցիներից ոչ ոք դիտողութիւն չ'արեց այս յայտարարութեան մասին, միայն նրանցից ոմանք հարցրին, թէ ինչո՞ւ հայերը ունեն ակնարկութիւն չեն արած սահմանագրութեան վերահաստատման հարցի վերաբերեալ և խնդրեցին, որ հայ պատգամաւորները իրենց մտածումը պարզեն:

Հայ պատգամաւորները յայտարարեցին, թէ հայկական նահանգներից դուրս օսմանեան պետութեան բոլոր մասերի բարենորոգման գործը մի շատ յարգելի գործ նկատելով հանդերձ, սահմանագրական կառավարութիւն հաստատելու խնդրով գրականապէս զբաղւելու ոչ պարտք է ոչ իրաւունք ունին, որովհետեւ իրենք ներկայացուցիչ են այնպիսի կազմակերպութիւնների, որոնք հայկական նահանգների համար Եւրոպական դաշնագրերի որոշած բարենորոգումները իրագործելուց զատ ուրիշ նպատակ չեն ունեցել և չեն կարող ունենալ. և թէ իբրեւ հայկական դատի ներկայացուցիչ իրենք չեն կարող Եւրոպայից պահանջել վերահաստատութիւնը մի սահմանա-

դրութեան, որ միջազգային դաշնագրերի վրայ չէ հիմնուած:

Այս յայտարարութիւնից յետոյ հայ պատգամաւորները իրենց պաշտօնը աւարտած համարեցին և այնուհետեւ իրենց ներկայութիւնը համաժողովի մէջ անօգուտ նկատեցին:

Մի վերջին նիստի մէջ, որին ներկայ չեղան հայ պատգամաւորները, ազատական օսմանցիները քուէարկել էին հետեւեալ յայտարարութիւնը:

Օսմանեան պետութեան ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք մասնակցեցին 1902 թ. փետրւար 4-ին Պարիզում բացուած համաժողովին, վերոյիշեալ յայտարարութիւններին ծանօթանալուց յետոյ՝ ըողորում են Թիւրքիայի արդի ընթիւնը դէմ. Յանձնառու են լինում միասին աշխատել:

1) Գերաբարանափոխել ներկայ կառավարական ընթիւնը ազատութեան և արդարութեան ընթիւնը, որը կ'ապահովի սահմանադրութեան հաստատումը:

2) Յիշեցնել Եւրոպական պետութիւններին թէ իրենց պարտականութիւնը և մարդկութեան ընդհանուր շահը պահանջում են որիքից և Բարձրագոյն Դրան միջնը զոյութիւն ունեցող միջազգային պայմանագրերի և որոշումագրերի պայմանները գործադրել տալ այնպիսի եղանակով, որ օսմանեան պետութեան բոլոր մասերը նրանցից օգտուին:

Համաժողովի կազմակերպիչները Եւրոպական լրագրողներին ուղարկել էին մի համառօտ ատենագրութիւն, որի մէջ հայ պատգամաւորները նկատեցին ինչ ինչ անճշտութիւններ: Այդ անճշտութեանց ամենակարեւորը հետեւեալ ֆրազի մէջ էր կայանում:

Հայերը յայտարարեցին թէ չէին կարող յանձն առնել իրենց ջանքերը միացնել միւս օսմանցիների ջանքերին՝ իրականացնելու համար այս վերջինների կողմից յայտնուած բաղձանքը արդի ընթիւնը մի սահմանադրական ընթիւնը կերպարանափոխելու մասին, որը հայերը նկատում են անսովորական և նոյնիսկ իրենց շահերին հակառակ:

Ուղղել տալու համար հայ պատգամաւորների այդ խնդրի մասին յայտնած կարծիքների այս անճիշդ արտայայտութիւնը, որ կարող էր հայոց համար վնասակար մեկնութիւնների տեղիք տալ Եւրոպայի ինչպէս և Տաճկաստանի մէջ, հայ պատգամաւորները համաժողովի նախագահին ուղղեցին հետեւեալ նամակը.

Պարոն նախագահ,

Ազատական օսմանցիների տպագրած համառօտ ատենագրութեան մէջ խմբագրութեան մի թիւրիմացութեամբ հայ կոմիտէների պատգամաւորների, սահմանադրական մի ընթիւնը հաստատելու մասին, յայտնած կարծիքները իրենց ճշմարիտ մտածման համաձայն չեն արտայայտուած:

Վիճաբանութիւնների այդ մասը ամփոփող պարբերութիւնը պէտք է, որ այսպէս ուղղւէ:


«Միւս կողմից հայերը յայտարարելով հանդերձ թէ պատրաստ են գործակցել արդի ընթիւնը կերպարանափոխելու նպատակով ձեռնարկուած ամէն գործողութեան, նկատել տալիս սակայն, թէ իբրեւ պատգամաւորներ հայ կոմիտէների, որոնք կազմուած են համաժողովին իրենց կողմից ներկայացրած յայտարարութեան մէջ ճշտուած ծրագիրը գործադրելու նպատակով, իրենք իրաւասութիւն չունին պետութեան ընդհանուր բարենորոգմանց եղանակի վրայ ունել որոշում՝ յայտնել, բայց թէ քնաւ հակառակ չեն մի սահմանադրական կեդրոնական ընթիւնը հաստատութեան, որ պիտի յարգէի այն մասնաւոր ու տեղական բարենորոգումները, որ Բերլինի դաշնագիրը և նրանից բխող միջազգային որոշումագրերը նախատեսած են հայերով ընտրուած և այդ դաշնագրէն ու որոշումագրերէն մասնաւորապէս նշանակուած նահանգների համար»:

Այս նամակը հրատարակեց L'Européen-ի մէջ և համաժողովի նախագահը խոստացած է երկրորդ անգամ տպագրել տալ համառօտ ատենագրութիւնը (résumé) այդ անճիշդ պարբերութեան մէջ գնելով վերոյիշեալ պարբերութիւնը:

Համաժողովը իր վերջին նիստին մէջ, որին ներկայ գտնուած են միայն ազատական օսմանցիները, ընտրել է մի մնայուն կոմիտէ: Հայ պատգամաւորները յայտա-


րարել էին կանխապէս, թէ չեն կարող անդամակցել այդ կոմիտէին, քանի որ իրենք պատկանում են արդէն նազմակերպւած և որոշ ծրագիր ունեցող մարմինների, բայց առաջարկեցին որ այդ կոմիտէն մշտական յարա-

բերութիւն հաստատի հայ կոմիտէների հետ և գործակցի նրանց այն բոլոր գործերի մէջ, ուր կարելի է իրենց գործակցել: Այդ կոմիտէն կազմւեցաւ ուրեմն միմիայն ազատական օսմանցիներէ:



ՕՆՆԻԿ ԹՈՐՈՍԵԱՆ (ԹԷՔԻՐՏԱՂԵՐԻ)

Կախւած դեկտեմբերի 9-ին 1901, Աղբիւնուպօլսում



Պ. ՄՕԿՕԼՕՎ (ԲՈՎԳԱՐ)

Պետոյի եւ Թորոսեանի ընկեր, սպանւած Աղբիւնուպօլսի մօտ, յայտնի ընդհարումի մէջ

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Տ Ա Ր Օ Ն Է Ն

10 հոկտ. 1901

Ս ա ս ն ոյ և Մ շ ոյ ն երկայ վիճակը.— Գարնանէ ի վեր Մշոյ և Սասնոյ մէջ կատարւած գազանային արարքներն՝ յայտնի կոտորածներն ու հրձգութիւնները առ երևոյթս դադրեցան թէև, սակայն կառավարութիւնը գաղտնի թէ յայտնի հրահանգներով կը շարունակէ իր ոչնչացման ծրագիրը: Ամէն օր միւսնոյն սարսափները կը կրկնուին՝ միայն տարբեր տարբեր միջոցներով ու ձևերով:

Տեղւոյս կառավարութիւնը ամէն ջանք կը թափէ հաւատացնել տեղս հասնող ոռոսական և անգլիական հիւպատոսներուն, թէ գործւած չարիքները «Ֆէդայիներէ» կողմից կատարւած են:

Հարկահաւաք ոստիկաններու, միւլթէզիմներու, կառավարական դատարաններու և համագիականներու սովորական և ամենօրեայ խժդժութիւններ, բռնաբարութիւններ ու աւերումներ մէկդի կը թողունք, միայն ընթերցողներու ու շարժողութիւնը կը հրաւիրենք, վերջերս՝ իբր թէ կառավարութեան խաղաղ պարագային, կատարած գերերու վրայ:

Սուլթանի կառավարութիւնը իբր հետեանք նախորդ խժդժութիւններու՝ զօրքերով լեցուց Դաշտի այն գիւղերը, որոնք Սասնոյ և Մշոյ դաշտի երթեւեկութեան գծերու

վրայ են. օրինակ. Հեխլան, Ղալաղաճ, Գոմեր, Քարձոր, Բերդակ, Հաւատորիկ, Ալվառինձ, Մշոյ քաղաքի արևելեան և արևմտեան այգիներու հնձաններ, նոյնպէս այրացաւեր եղող Մոկունք գիւղի հնձաններն ալ:

Դաշտի արևմտեան-հիւսիսային գիւղերէն՝ Սահակ, Պաղու, Մեղտի, Ղէյպիան, հայաչէն գիւղերու մէջ ևս զօրքեր լեցւեցան: Յիշեալ գիւղերը Ս. Կարապետի շըրջակայքը կը գտնուին: Ո՞վ գիտէ թէ ի՞նչ գիւական դիտումներ ու ծրագրեր կան թագնւած այդ բոլորի մէջ: Հարկ չկայ մանրամասնութեամբ նկարագրել այն գիւղացւոց վիճակը, որը ստիպւած է իր տան բուխերիկի քովն ու թոնիրի կողքին մշտապէս տեսնել այդ բարբարոսները, որոնց համար լըբութիւնը՝ սրբութիւն է, գազանութիւնը՝ արդարութիւն, և հայի աշխատանքն անյազապէս վայելելը՝ գերագոյն առաքինութիւն: Գիւղացւոց այդ արդի անտանելի դրութիւնը որոշ կերպով հասկցնելու համար միայն փոքրիկ օրինակ մը կը բաւէ.— ճամբորդութեամբ պատահեցանք գիւղ մը և աղքատիկ տնակի մը մէջ պատսպարան գտանք: Տանտէրը սովորական հիւրասիրութեամբ սրտանց ընդունելութիւն ըրաւ մեզ, չխնայելով իր խոտեղէն անկողինն ու միակ փալասի կտորը. . . Կերակուրի ժամանակ, երբ հաւկիթ մը խընդրեցինք, հառաչանք մը թռաւ կրծքէն և ըսաւ. «Հաւ չեն թողուցեր այդ անիծածները, որ հաւկիթ ալ ունենանք. ամբողջ գիւղը եթէ տակն ու վրայ ընենք գէթ գեղի համար հաւկիթ մը գտնել անկարելի է» . . .

Այդ հակիրճ պատմութիւնը, ուր կը պարունակէր հայ գիւղացու ներկայ վիճակը իր դժոխսային բոլոր նկարներով՝ մեզ չհետաքրքրեց կարծես, որովհետեւ այդ առաջինը չէր, զոր կը լսէինք աղքատ ու տանջւած գիւղացու մը բերնէ:

Ահա 95-ի մայիսեան ռէֆորմների առաջին յօդւածի գործադրութիւնը, զոր Մեծ Մարդասպանը յանձն էր մտցնել «Հայաստանում» մեղսակից Եւրոպայի երաշխաւորութեամբ: Դառնանք Բ ու Գ բարենորոգութեանց պարբերական յօդւածներուն...

Սասունը իր գոյութիւնը քարշ տալու համար՝ դարնանէ ի վեր ոգի ի բռին կը ջանար գէթ չթողնելու որ զօրանոցներ շինէին և տաճիկ զօրքերով սրբապղծէին իր սարերն ու ձորերը, սակայն տաճիկ կառավարութիւնը Բ. Դրան կրկնակի հրամաններով որոշած է այդ ծրագիրը իրագործել, որի շուտափոյթ գործադրութեան համար սուլթանէն վճռւած է 2,600 ոսկւոյ գումար մը:

Այժմս էլ ուժասպառ, անզէն, անօթի ու ծարաւ սասունցին շիւարած այս անելանելի կացութեան առջև, չգիտէ թէ ինչպէ՞ս պէտք է լուծել այս Գորդեան հանգոյցն ալ... Այսպէս ահա վճռւած է կտրել մեր այն արիւնատար երակը, որով արիւնաքամ ըլլալով կորցնենք մեր գոյութիւնն անգամ...

Մշոյ հայ տարրը իբր թէ միանգամից ազատելու այս անվերջ ծով ցաւերէն, վճռեց օրթօդոքսութեան դիմել, զոր նախորդ թղթակցութեան մէջ յիշել ենք արդէն:

Նայելով երևոյթին՝ ռուսական հիւպատոսը օգտւելով դրութիւնէն կը ջանայ իրականացնել հայերի այդ յուսահատ քայլը: Այդ մասին երկարօրէն գրւած է ցարի կառավարութեան և ցարդ դրական պատասխան մը ստացւած չէ: Ասոր հետեանքն ալ հայերիս դրութեան նման անորոշ կը մնայ, անշուշտ այդ ծրագրի տակն ալ մեզ համար թագնւած կրակ մը կայ...

Տեղս հասնող բազմաթիւ զօրքերի հետ եկած է ֆէրիզ (հրամանատար) մը. Բաղէշի կուսակալն ալ Ալայի պէյի հետ միասին վերադարձած են տեղս, շնորհիւ վեհ հ. կայսեր իբր խաղաղութիւնը վերահաստատող մարմին: Գործւած չարիքները պարտկելու և աւելի հիմնաւոր հայաջինջ ծրագրեր իրականացնելու առաջին քայլերն եղան.

ա) Տեղւոյս առաջնորդական տեղապահին և քաղաքի երեւելիներուն առաջարկել, որ համոզեն հայ ազգաբնակչութեան խաղաղ մնալ. հակառակ պարագային մենք ալ չպիտի կրնանք հանդարտեցնել թիւրք ամբօխի և քիւրդ տարրի լարւած մտքերը:

բ) Յանձնարարել հայ գիւղացիներուն, որ յետամնաց տուրքերը շատ շուտով վճարեն՝ տեղս գտնւող զօրքերու պէտքերը գոհացնելու համար:

Այս խորհրդաւոր և դիւային հրահանգներէ յետոյ բերել տին Մուշ ձիւրանցի աշիւթի ցեղապետ Իպրահիմ պէյը (համագիւծի գայմագամ), որի կատարած շահատակութիւնները անկարագրելի են. առաջին վայրկեանին Դաշտի հայ գիւղացին ուրախ տրամադրութեան մը տակ գտնւեցաւ, երազելով թէ Իպրահիմ պէյը՝ այդ ամենօրեայ տանջանաց բոլոր քարուքանդ պիտի լինի. սակայն բոլորի վրայ սառը ջուր լեցւեց, երբ երկու օր յետոյ՝ խաղաղութիւնը վերահաստատող մարմինը նորանոր հրահանգներով ու յանձնարարականներով ազատ թողուց՝ տալով անոր Դաշտի արև-

մտանահիւսիսային հայ գիւղերու հարկահաւաքութեան պաշտօնը: Այլևս ընթերցողներուն կը թողում երեւակայել թէ ի՞նչ կը լինի հայի վիճակը քրդի կոշտ ու բիրտ ուժի ձեռին...

Տաճիկ կառավարութեան յատուկ սովորութիւնն է նեղը մտած պարագային իր գործած գազանութիւններու պատասխանատուութիւնը ծանրացնել աննշան քրդերու կամ պաշտօնեաներու վրայ, Մեծ չարագործները միշտ պահելով մեծ գործի համար...

Այսպէս Իպրահիմ պէյի փոխարէն զօրքերով յարձակում գործեցին Մեղտի հայ գիւղի մէջ բնակող Արապ անուն քրդի վրայ և սպաննեցին. Արապի հօրեղբայրը (յայտնի աւազակապետ Մէհմէդ Ալին) կառավարութեան գաղտնի հրամանով Մուշ եկաւ և անձնատուր եղաւ. այժմս ալ տեղական կառավարութիւնը կը ջանայ բարձրագոյն ներում կորզել սուլթանէն: Յաջողութիւնը անպայման է...

Դարձեալ ձիւրանցի աշիւթի ցեղապետներէն և համագիւծի զօրավարներէն Հայտար պէյը՝ թողունք անոր անցեալը՝ միայն վերջերս Պուլանըզի գաւառի Ագրակ գիւղէն սպաննած էր չորս հայեր, առեանգած աղջիկ մը և գրւած էր ամբողջ գիւղը. հակառակ երկար ու բարակ բողոքներու Մուշ եկաւ ու ազատ վերադարձաւ. ո՞վ գիտէ թէ այն ալ ի՞նչ նորանոր կորստաբեր ծրագրեր տարաւ հետը:

Ս. Կարապետի վանքի կարաւանն ըստ սովորութեան ղողկած էր Խնուս աղ բերելու, ճանապարհին յարձակումով մը աւարի առնւած է 10 ձի 5 ջորի և 15 ոսկի դրամ: Հետքն անգամ չ'երևիր:

Մոկունք գիւղի այրեացաւեր լինելն, իննսունէ աւելի գիւղացիներու՝ որոնց թուում կան կանայք և աղջկունք, բանտի մէջ հիւծւելն և մնացածների անպաշտպան ու անպատսպարան մնալն, նախորդ թղթակցութիւններով երկարօրէն գրւած է. չենք կարող այդ թշուառներու վիճակը մանրամասնութեամբ նկարագրել: Ցարդ բանտի մէջ մեռնողներու թիւն է 9, անպաշտպան մնացածներէն՝ անօթութենէ, վախ ու սարսափէ մեռնողներու թիւն 18, 27 անձի ալ 10-15 տարւայ բանտարկութեան վճիռ տրւած է: Այս բոլորը կը կատարւին ռուսական և անգլիական ներկայացուցիչներու քթի տակ ու աչքի առջև, միմիայն Շարիֆ աղայի մը՝ Մուհամմէդի սրբազան գաւառի մը սպաննութեան հետեանօք, որը տաճիկական յատուկ անբարոյականութեան զոհն է: Մինչև անգամ դատարանի մէջ մոկունքի հայ աղջիկը բացարձակ խոստովանեցաւ որ իր պատիւը աղարտել ուզելու համար սպանած է իր և դրացւոյ ձեռամբ, բացի իրանցից ոչ ոք մեղսակից է այդ սպանութեան: Այդ ցուցմունքն ու խոստովանութիւնը կառավարութեան շահուն չէր գար, նա բոլոր ուժով կ'աշխատի հաւատացնել, որ սպաննութիւնը ֆէդայիների կողմից է կատարւած և քաղաքական գոյն ունի խնդիրը: Հակառակ երկար դիմումներու և ոճրագործ սուլթանին ուղղւած երկու հեռագրերու, որով դատապարտեալները նազլ մահքէմէ (դատավարութեան փոխադրութիւն) կը խնդրէին, անլսելի մնաց խեղճերու ողբն ու աղաղակը, և մինչև անգամ տեղւոյս դատարանը առանց ուշադրութեան առնելու ամբաստանեալներու հարցաքննութիւններն ու իրաւացի փաստերը, տւաւ տաճիկական օրինաց արգար վճիռը, զոր վերև բացատրեցի...

Երբ այս բարբարոսական դրամայի առջև էր կանգնած Մշոյ հայ հասարակութիւնը, երբ նա յուսահատութեան ծայրագոյն աստիճանի վրայ էր բարձրացած, նոյն այդ միջոցին կրկին երևան ելան ժողովրդի յուսատու աստղերը՝ յեղափոխական հայդուկները, լոկ այս վճռով թէ— կոտորել միանգամից և չտեսնել ժողովրդի այս պարբերական ոչնչացումը: Մահան կարապետներու այդ վճիռը յուսահատ ժողովրդի սրտին շատ մօտ, շատ դիւրեկան էր, որովհետեւ ընդհարումներու բերմամբ նախ զոհի սեղանի վրայ պիտի բարձրանար ինքը ժողովուրդը, և գուցէ իր թշուառութիւնները վերջ մը գտնէին գերեզմանի պաղ հողերուն տակ:

Այս ծրագիրը իրագործելու նպատակաւ մեր հայդուկներէն թւով մօտ 25 հոգի, հասան Մուշէն 1¹/₂ ժամ հեռուն եղող Առաքելոց վանքը: Մշոյ քաղաքական ժողովոյ ատենապետ Շահինեան Աստուածատուր աղան, առանց ամէնալու իր խռպոտ դէմքէն ու դիրքէն, սուլ-թանական կառավարութեան ծառայութիւն մը մատուցանելու պատեհ առիթը ձեռքէ չփախցնելով կուսակալին անմիջապէս լուր կուտար:

Կուսակալն ու ֆէրիզը հակառակ սուլթանական գրծւած ծրագրին, կը կանչեն տեղւոյ առաջնորդական տեղապահ ծերունի ու բարի Յովհաննէս վարդապետ Մուրատեանը և քաղաքական ժողովը ու կ'առաջարկեն, «հեռացնել վանքէն որքանոցի աշակերտներն ու միաբանութիւնը, որովհետեւ վանքը պաշարման վիճակի են: Թարկելով պիտի ումբակոծուի»: Այս բանակցութիւնը կ'երկարի երկու օր. վերջապէս մեր հայդուկները պաշարող զօրքերու շղթան կտրելով՝ կ'անյայտանան...

Որոշ կերպով կրնանք ըսել, որ եթէ օտար հիւպատոսներու ներկայութիւնը չլինէր՝ այժմս վանքն իր որբերով ու միաբանութիւններով հողակոյտ մը և ամբողջ Դաշտն ալ բուերու բոյն մը դարձած էր: Փառք Աստուծոյ... Եւ րօպացիներէն օգուտ տեսաւ հայրը...

Կառավարութիւնը կը մտածէ Առաքելոց վանքն զօրանոց դարձնել:

Այս է Մշոյ և Սասնոյ արդի խաղաղ կոչւած դրութիւնը՝ այսպէս և ահէց աւելի վատթար պիտի լինի հայ ժողովրդի կեանքի շարունակութիւնը քանի որ այսպէս թէ այնպէս վերջակէտ մը դրած չէ կեանքի արդի դառն պայմաններու առջև...

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Է Ն

Ձմեռը գիւղացիին, երկրագործին համար հանգստի եղանակ նկատւած է սովորաբար. այն որ ամառն ի բուն աշխատեցաւ, վարեց, ցանեց, հնձեց ու քաղեց անշուշտ իրաւունք ունի քիչ մը հանգստանալու, իր յոգնած, պարտասած անգամները բուխերիկին կամ թոնիրին մօտ քիչ մը հանգչեցնելու, կազդուրելու: Բայց հայ գիւղացիին, հայ աշխատաւորին համար շատոնց է որ այդ դասական հասկացողութիւնը կորսնցուցած է իր ուժը, և տառապանքի այս աշխարհին, թիւրքին կոչւած դժոխքին մէջ, իւրաքանչիւր եղանակ, ըլլայ ծաղկաբեր գարուն թէ ձիւնաբեր ձմեռ, խժգոնութեանց նորօրինակ եղանակ մը կը դառնայ հայ աղգի գլխուն՝ անոր ոչնչացումը փութացնելու իր բնագաւառին մէջ:

Դեռ քաղաքակիրթ երկիրներու մէջ չեն մոռցւած, գէթ մարդասէր և զգայուն սրտերու համար, այս դաւաժանի տարւոյս մէջ կատարւած այն եղեռնական դրածողութիւնները թիւրք պաշտօնական ու անպաշտօն գահիճներու կողմէ Սասունի և Մշոյ մէջն ու շուրջը և որոնց արձագանք հանդիսացաւ «Պրօ Արմէնիան»: Ձեռք գիտեր թէ պաշտօնական Եւրօպայի ներկայացուցիչները ինչ գոյներով ներկեցին այդ թրքական սովորական բարբարոսութիւնները և որոնց վրայ բեռնուցին պատասխանատուութիւնները, բայց հակառակ հիւպատոսներու երթ ու գալերուն կը շարունակւին գեռ այդ հարստահարութիւնները, կեղեքումները, սպանութիւնները և անվերջ բանտարկութիւնները:

Աշխարհքի ծանօթ է թէ Թիւրքիոյ գանձը յաւիտեանականապէս պարապ է, անհատնում պաշտօնեաներ, ծառայողներ կան, որոնք շարունակ դրամ, հաց կը պահանջեն. կառավարութիւնը ստիպւած է գոհացում տալ ատոնց պահանջին, հակառակ պարագային պէտք է ինքն իր մէջ պատուաւ, քայքայել լմնայ: Ու նորէն այդ չարչարած, թախնւած, անպատւած ու բանտարկւած հայ ժողովուրդն է որ ստիպւած է կառավարութեան այս ծակ գանձարանը լեցնելու, անօթի պաշտօնեաներու փորը կշտացնելու:

Այսօր թիւրք հարկահաւաքները, քանի մը տասնեակ զինւորներու ընկերակցութեամբ սփռւած են բոլոր հագիւղերը և կը պահանջեն, բռնի կը գանձեն հարկերը:

Մենք ոչինչ չպիտի ըսէինք թիւրք կառավարութեան, եթէ ան բաւականանար միմիայն ներկային հարկերը գոցելով. հայ գիւղացին վճարած է արդէն իր ներկայ տարւան պարտքը. հիմա կառավարութեան պահանջածը անցեալի, 94-95-էն ի վեր բարդւած հարկերն են, այն հարկերը, որոնք արդէն շնորհւած էին կոտորւած ժողովուրդին, բան մը որ ի լուր աշխարհի տարածեցաւ. Հայ գիւղացին բնական է որ անկարող է այդ հին պարտքերը վճարելու, քանի որ ներկային մէջ հազիւ կրնայ ինքզինքը ապրեցնել. բայց թիւրք հարկահաւաքները ոչինչ կուզեն հասկնալ. անօթի գայլերու պէս կը յարձակին ամէն տան վրայ. կը խուզարկեն և հին պարտքերու փոխարէն կառնեն կը տանին ինչ որ գտնեն հոն՝ կարասի, անկողին, կենդանի, վերջապէս ինչ որ կրնայ արժէք մը ներկայացնել: Գիւղերու մէջ շատ տեղեր երբ ոչինչ գտած են տանելու, կտրած ու ծախած գիւղացիի ծառերը, ու եթէ ոչինչ գտնեն տանելու, այնտեղ հարկահաւաքները իրենց հետ կը բերեն քիւրդ աղա մը, որ գիւղացիի հարկերը կը վճարէ և փոխարէն գրաւի կառնէ անոնց տուններն ու հողերը և այս հարկ հաւաքելու այս նոր դրութեան հետեւանքով եթէ գիւղացին կարենայ իսկ այս ձմեռւան մէջ քաշքշել իր գոյութիւնն, մէկ երկու տարիէն պիտի զրկուի իր տունէն ու հողէն և ստրուկը, ճորտը պիտի դառնայ թիւրք ու քիւրդ աղաներուն:

Բայց միայն գիւղերու, խուլ անկիւնների մէջ չէ, որ այս բարբարոս հարկահաւաքութիւնները կը կատարւին, թիւրք կառավարութիւնը այլևս քաշքշել, զգուշանալու ոչ մէկ հարկ կը տեսնէ. նոյնիսկ քաղաքներու մէջ, եւրօպական հիւպատոսներու քթին տակ, անոնց ներկայութեանը կը շարունակէ իր շահատակութիւնները: Օրինակի համար քաղաքիս մէջ ամսոյս 8-էն սկսելով կառավարական հարկահաւաքները ոստիկաններու և զինւորներու ընկերակցութեամբ սկսան Այգեւստանները

կարգաւ մտնել հայ տունները և բնի տանիւ անկէ ինչ որ ձեռքերնին անցնի՝ աթոռ, սեղան, անկողին, պղնձեղէն, կով, եզ և չին, և այս բոլորը հին պարտքերու ի հաշիւ: Աւ այս ափաշկարայ աւարառութիւն կը շարունակէի դեռ: Գրաւաճ ապրանքները աճուրդի կը հանէին և կը ծախէին իրենց բուն արժէքէն շատ վար գնելով ու վանցի հայը թէ և զրկած իր անհրաժեշտ կարասիներէն ու կենդանիներէն, սակայն կը շարունակէ պարտական մնալ կառավարութեան:

Հին և նոր պարտքեր վճարած ըլլալը ալ շատ անգամ չ'ազատէր հայը կառավարութեան հարստահարութենէն: Քաղաքիս մէջ փոքրիկ խանութպան մը հանգիստ սրտով, որչափ կարելի է իր գործին կը նայի. յանկարծ իր հարկահաւաքները կը պաշարեն իր խանութը և դրամ կը պահանջեն. մարդը կը պատասխանէ թէ ինք բնաւ տալիք չունի. դուն չունիս, բայց եղբայրդ ունի կ'ըսեն. մարդը կը յայտնէ որ ինք շատոնց բաժնւած է եղբորմէն և իրենց գործերը տարբեր են: Հարկահաւաքները որուն եղբոր տունը խուզարկած և տանելու ոչինչ գտած են, մէկ երկու տփոցով կը լռեցնեն անոր արդար առարկութիւնը, բռնի կը վերցնեն խանութէն պահանջքնուն չափ ապրանք ըսելով. — դուն գնա գանձէ եղբորմէդ: Աւ այսպէս շատեր ստիպւած են բռնի կերպով վճարելու իրենց համաքաղաքացի կամ մերձակոր սպաննւած, թաւանած կամ գողթած մարդոց իրական կամ երեւակայական հարկերը վճարելու:

Աւ դեռ ասոնք բոլոր սկիզբն են երկանց: Արդէն կառավարութեան ոստիկանները, ինչպէս նախորդ նամակով ալ պատմած ենք, գիշեր թէ ցերեկ բան գործ ըրած են իրենց անհաճոյ եղած դէմքերը ձերբակալել իբրեւ կասկածելի անձնաւորութիւններ: Այսօր փողոցներու մէջ ձերբակալելէ գոհ չըլլալով սկսած են տունները խուզարկել: Մի քանի օր առաջ գիշերանց պաշարեցին տուն մը. խուզարկեցին, բայց ոչինչ կասկածելի անձ կամ իր չգտան, ինչպէս նաև մինչև ցարդ ոչինչ կրցան վնասակար և վտանգաւոր բան մը ապացուցանել: Իբրեւ կասկածելի ձերբակալած անմեղներու վրայ: Սակայն բոլոր այս յուսահարութիւնները չեն կարող ձեռնթափ ընել կառավարութիւնը, որ գոնէ ձեռնաւն այս խտրութիւններուն մէջ անհանգիստ չ'ընէ բազմաչարքար հայութիւնը:

Հայ գիւղացին ու քաղաքացին այսօր գրեթէ շարած, ընդարձացած վիճակի մէջ է: Գիտէ որ կառավարութեան բուն նպատակն է իր անօրինակ խտրութիւններովը ու հալածանքներովը առաջ բերել բողոքի, ընդդիմադրութիւն փոքր շարժում, որպէս զի նոր ընդհանուր կոտորած մըն ալ սարքէ պատասխանատուութիւնն խեղճ հայուն վրայ բեռնելով, ու ասոր համար կը լռէ, իր գլուխը կը խոնարհեցնէ, որ արիւնի այդ սպառնացող ալիքն անվտանգ անցնի իր վրայէն: Բայց հետզհետէ աճող կառավարական այս խտրութիւններուն հետեւանքով կը հատնի հայուն ալ համբերութիւնը, կը սպառնան անոր խելացի համակերպութիւնը, և ստիպւած իր տկար ուժերով, իր արիւնով կը փորձէ վերջ մը տալ իր կրած անվերջ տառապանքներուն, հոգ չ'ընելով բնաւ թէ իր ոսկերոտիքը, աւերակները խուզարկող, քննող եւրոպական հիւպատոսները, ներկայացուցիչները որո՞ւ վրայ պիտի բեռնեն պատասխանատուութիւնը:

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ը

ՓՐԱՆՍՄԻ ԴՐ ՊՐԷՆԱՆՍԵՐԻ ԲԱՆԱԽՍՈՒԹԻՒՆԸ ԺՐՆԷՎԻ ՄԷՋ

Եւրոպայի հայ ուսանողական Միութիւնը, իր ծրագրի ոգուն համաձայն, որով պարտականութիւն կըստանձնէ եւրոպայի զանազան քաղաքներուն մէջ հայկական դատին ինպատու բանախօսութիւններ կազմակերպել, հրաւիրած էր Փրանսայի Նշանաւոր քաղաքագէտ-հրապարակագիր Պ. Փրանսիս դը Պրէսանսէն, արեւելեան հարցին էն ձեռնհաս և հեղինակաւոր անձնաւորութիւններէն մէկը — ծանօթ մեր հայրենակիցներուն «Պրօ Արմենիայի» խմբագրական կոմիտէի անդամակցութիւնով — որպէս զի Ժընէվի մէջ բանախօսութիւն մ'ընէ հայկական հարցի մասին:

Ազնիւ և վեհանձն հրապարակագիրը, որուն անհանգիստ ու փիլիսոփայական հոգին, ուրուրեմն մարդկային ազատագրութեան կռիւն մէջ գոհացում գտած է, սիրայօթար ընդունեց լսելի ընել արդարութեան բողոքը ազատութեան Ոստանին, Ժընէվի մէջ, որ համաշխարհային քաղաք մըն է, կամ իր խոսքով «Եւրոպայի զգայասրտութեան կեդրոններէն մէկը»:

Պրէսանսէի անունը բաւական էր արգէն որ ամբողջ Ժընէվը թունդ հանէր: Ամէն մարդ անհամբեր էր լսել Փրանսայի մեծ հրապարակագիրը, որ առաջին անգամն էր կուգար Ժընէվ և մանաւանդ շնորհակալ կ'ըլլային հայ ուսանողութենէն, որ այդքան գեղեցիկ և թելադրական անակնկալ մը կ'ընէր վայելել տալով իրենց այն անձնաւորութեան ներկայութիւնը, որ Տրէյֆիւսի դատին տոնն, արդարութեան էն հզօր, էն քաջասիրտ պաշտպաններէն մէկն եղաւ, նոյնիսկ իր կեանքը վտանգի ենթարկելով: Ուրիշ բանախօսութիւններ, որոնք տեղի պիտի ունենային նոյն իրիկուն, յետաձգւեցան այդ առթիւ:

Բանախօսութիւնը, որ յիշատակելի պիտի մնայ, տեղի ունեցաւ փետրուար 10-ին երեկոյեան Ժամը 9-ին, Ժընէվի էն հոյակապ սրահին, Վիկտորիա Հօլի մէջ, որ եւրոպայի էն գեղեցիկ շէնքերէն մէկն է: Սրահին դռները հազիւ բացւած, արգէն ամբողջ աթոռները գրաւած էին, այնպէս որ Ժամ չանցած սրահը ոչ նստելու և ոչ ալ անցքերուն մէջ կայնելու տեղ կար:

Ժամը 8-ին բոլոր դռները փակւած էին, ալիքալիք եկող հասարակութեան առաջ: Երկու հազար հինգ հարիւր հոգի, նստած ու կայնած, ելքերական լոյսի ողկոյցներու փողփողումին տակ, անհամբեր ու շունչը բռնած կըսպասէին պ. Պրէսանսէի գալուն: Տեսարանը ինքնին գրաւիչ և ոգևորիչ էր: Օտար և տեղական պաշտօնական մարմիններ, պրոֆէսորներ, ուսանողութիւն, ընկերութիւններու ներկայացուցիչներ, Ժընէվի ազնւական և ժողովրդական դասակարգերը, փութացած էին լսել հայասէր հրապարակագիրը: Սրահը կը ներկայացնէր շքեղ ծաղկեփունջ մը, գեղեցիկ սեուի ներդաշնակ և հետաքրքիր բազմութիւնով: Հայ ուսանողահինները և ուսանողները կը գրաւէին բեմին նստարանները:

Ճիշդ Ժամը 9-ին պ. Պրէսանսէ կ'երևայ բեմին վրայ պ. Փափոնի հետ, որոնք կ'ողջունէին բուն և երկար ծափահարութիւններով: Պ. Փափոն Զուիցերիոյ պետական ժողովի անդամ, և Ժընէվի կանտօնին կրթական նախարարն է: Հակառակ իր ծանր ուժաթափութեան ու ծերութեան, պ. նախարարը ոչ միայն ընդունեց պատւակալ

նախագահութիւնը, այլև, իր առողջութեան վտանգով, ջերմ փափաք յայտնեց իր պերճախօս և մարդասէր ձայնը միացնել պ. Պրէսանսէի բողոքի ձայնին եւրօպայի անտարբերութիւնը և սուլթանի ոճիրները նշաւակելու համար: Քանի քանի հեղ թարգման հանդիսացած է ժընէվ քաղաքի հայասիրական վեհանձն ղգագումարի և համակրութեան:

Պ. նախագահը, եւրօպայի հայ ուսանողական Միութեան կողմէ բացաւ ժողովը, քնարերգակ պերճախօսութեան մը յուզած խօսքերով, որոնք սարսուռի աղիքներ կանցնեն բոլոր սրահին մէջէն և կը գտնեն սրտերու ծածման: Փոքրիկ, ազատասէր և մարդասէր հանրապետութեան մը բողոքի ձայնն էր որ կ'ուղղէր «ուժեղներուն» կատարած հարստահարութիւններուն և ոճիրներուն դէմ, ֆինլանտայի, Թրանսվալի և Հայաստանի մէջ: «Մեր փոքրիկ ժընէվը, ըսաւ, գիտէ գնահատել քաղաքարի և սկզբունքի ասպետները, դժբախտաբար շատ ցանցաւայժմ: Թէև ամէն տեղ ուժը իրաւունքէն առաջ է, բայց սպասենք արդարութեան գոց դռան առջև և պահենք մեր ուժը օր մը զայն բանալու համար: Արդարութեան համար անդուլ և անվճատ կռիւով ցցենք որ մենք չենք յուսահատիր: Մենք կըզգանք որ արդարութեան և իրաւունքի համար եղած ենք և մեր պարտականութիւնն է միացնել մեր ձայնը ամէն անիրաւութիւններու դէմ եղած բողոքին»:

Բունն ծափահարութենէ ետք, պ. Պրէսանսէ կը բարձրանայ բեմը: Լեցուն ու պատկառելի դէմք մը, մագերու գորշ ձերմակութեան տակ խորհրդով ու հմտութիւնով ծանրաբեռնած գլուխ մը, որ զգացնել կուտայ թէ գիտակցութիւնը և տիրականութիւնը ունի իր ըսածին: Իր երեւումը արդէն կ'ողջունէր սրտագին ծափահարութիւնով:

Իր ճառը, որ առանձին գրքովի պիտի հրատարակուի ընդարձակ, կը փութանք համառօտել «Դրօշակի» մէջ: Պ. Պրէսանսէ իր բանախօսութիւնը սկսաւ պարզ, այլ մագիստօրէն, առանց հետտորական ճիգերու, մէկ ու քառորդ ժամ ամբողջ սրահը իր կուռ, վճիտ և հմտալից բանախօսութեան հմայքին տակ պահեց:

Բանախօսութիւնը կարելի է երեքի բաժնել: 1) Համառօտ ակնարկ մը ֆրանկո-թիւրք վեճին վրայ և ֆրանսայի վերջի բոպէին հայկական դատի լքումը: 2) Արևելեան հարցին պատմական ամփոփ տեսութիւնը և 3) Հայաստանի մէջ յեղափոխութեան անհրաժեշտութեան ներբողը, որ ներկայ դժոխային պարագային միակ յենակէտն է Հայաստանի փրկութեան:

«Երջանիկ կը համարիմ ինքզինքս, ըսաւ պ. Պրէսանսէ, որ եկած եմ հարստահարած ժողովրդի մը համար իմ ձայնս լսելի ընել եւրօպայի զգայարարութեան կեդրոններէն մէկուն մէջ: Մի կարծէք որ Հայաստանի մէջ այլևս ոչինչ կը պատահի, ընդհակառակը գրութիւնը աւելի ծանրացած է, վըզովիչ յուրեր կուգան, նոյնիսկ պաշպօնապէս հաստատուած:

Կը յուսացէր որ ֆրանսան՝ օգտելով ֆրանկո-թիւրք միջադէպէն, առնելիքներու դատին միացնէր Հայաստանի ինպատ միջամտութիւն մը: Երեսփոխանական բոլոր կուսակցութենէ բաղկացած պատգամաւորութիւն մը այդ մասին դիմում ըրաւ պ. Տէլքասէին, բայց ան իր առջի ծրագրի վրայ նահանջեց նորէն. . . տօնքիշօտութիւն ըրած չ'ըլլալու համար, թէև խնդիրը միայն Պերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածը գործադրելու առաջարկին

վրայ էր: Սուերին մէջէն երկնցած բազուկ մը, Ռուսիոյ բազուկը, կանգնեցուց ֆրանսան:

Ատենախօսը անցաւ արևելեան հարցի պատմական և քաղաքական երեք ֆազերուն, սկսած Պօլսոյ առումէն:

Առաջին ֆազին՝ թիւրքերը յաղթական են ամէն տեղ, եւրօպան սարսափահար անընդհատ պայքարի և բնաջնջումի խաչակրութիւն մը կը ձեռնարկէ: Լեհաստանը այդ ասպետական խաչակրութեան գլուխը կանցնի:

Երկրորդ ֆազին՝ թիւրքի անկումէ անկում կը դիմէ, այս անգամ թիւրքիոյ տկարացումն է որ եւրօպայի երկիւղ և մտատանջութիւն կը պատճառէ. անոր ժառանգութեան խնդիրը դիւանագիտական բանաձև մը կը ստեղծէ՝ «Օսմանեան կայսրութեան պահպանումը»: Ռուսիան, որ աչք ունի Պօլսոյ, կը ջանայ հետզհետէ տկարացնել թիւրքիոն, ասոր համար կը նպաստէ պալկանեան տէրութիւններու անկախութեան և ինքնավարութեան: Այս քաղաքականութիւնը տեւեց մինչև 1878-ի Պերլինի Վեհաժողովը:

Երրորդ ֆազին, Անգլիա ուսու-թիւրք պատերազմին միջամտելով, արգելք կը ըլլայ թիւրքիոյ բաժան բաժան ըլլալուն, գործարարութեան Պերլինի Վեհաժողովը: Ռուսիա չի փորձեր այլևս թիւրքի անդամատել Պօլսը ձեռք ձգելու համար, այլ կը հետամտի թիւրքի և իր խնամակալութեան տակ պահել:

Այս ֆազին մէջ է որ կը սկսի հայկական կոտորածները: Եւրօպան, որ համառաւ կրնայ միայն գործել սնանկութիւն կրեց իր դիւանագիտութեան մէջ, զի իրենց մէջ այնքան մեծ է ոսոխութիւնը: Սուլթանը, որ բաւականին խելք ունի այդքանը հասկանալու, եւրօպայի համարարութեան դէմ անգործութեան քաղաքականութիւնը կը հանէ, որ կը յաջողի իրեն:

Գործի և շահու քաղաքականութիւնն է տիրող ասկէ ետքը: Բոլոր տէրութիւններն ալ սուլթանին շնորհներուն կը սպասեն: Գերմանիոյ Լօհէնկերէնը (կայսրը) երուսաղէմ գնալիս, կերթայ կը համբուրէ սուլթանը Պադտաի գծին արտօնութիւնը ստանալու համար:

Առնելիքի միջադէպին հետեանքով ֆրանսական քաղաքականութիւնը կուգայ աւելի վատթարացնել հայերու վիճակը: Կօնստանդ վերադարձաւ Պօլս, նոր մեղալուսին մը կը սկսի սուլթանին հետ, որ այժմ աւելի ուժեղ պիտի զգայ իր անպատիժ մնալուն:

Կացութեան ծանրութիւնը սակայն պէտք չէ վհատեցնէ մեզ: Իրաւունք չունինք արդարութեան դատը լքելու և դեռ մեր ձեռքին տակ եղած զէնքը, բոլորը չենք գործածած:

Շատերը կը ճանչնան հայերը իրր նահատակ և տառապագին ազգ մը. այդ, կը տառապին անոր համար, որովհետև միշտ դիւցազնական մնացած են: Միսմինակ՝ չ'ընկրկեցան ոչ դժարութիւններուն և ոչ վտանգներուն առջև, իրենց ցաւերուն ու իր չարաբանքներուն վրայ աշխարհի ուշադրութիւնը հրաւիրելու համար չվարանցան արիւնին թափել: Այս դիւցազնական ազգը պիտի կրնար ապրիլ, եթէ միջազգային իրաւունքի կանոնները և Պերլինի Վեհաժողովին երաշխաւորութիւնները յարգէին և զօրեղ աջակցութիւն մը տրէր անոր:

Այդ սարսափելի պայմաններուն մէջ փրկութեան միջոց մը կայ, կռիւը, ծայրահեղ կռիւ, կռիւ պատմութեան, անցեալին և կռիւ յեղափոխութեան անունով, այսինքն որ նպատակ մը կը ցցնէ և միջոցներ կենթադրէ: Նահատակներ պիտի ըլլան՝ անոնց արիւնը պիտի բեղմնաւորէ

իրենց դաշտը: Եթե երբեք բռնութիւնը արդարացում գտնէ հարստահարութեան մը դէմ, ան ալ հայերու վիճակն է: Նորերս տէրութեանց գիւմում ըրին, չափաւոր և համեստ վերջնագրով մը 61-րդ յօդաւորի երաշխաւորութիւնը պահանջելով, որպէս զի կարող ըլլան գոնէ իրենց գոյութիւնը ապահովել: Այս վերջնագիրը ապարդիւն մնաց, ալ ի՞նչ միջոց կը մնայ հայերուն—եթե ոչ կռիւ:

Հայաստանը չի թողուր որ Հայաստանի իրաւունքը կորի կորստի, չպիտի յոգնի եսամոլ Եւրոպայի երեսին ճշելէ: «Վայէն, ինչ ըրիր եղբայրդ»:

Պ. Պրէսանսէ կարգաց Էտիրնէ կախող հայ հերոսներուն վերջին սրտայոյզ և խրախուսիչ խօսքերը, ցոյց տալու համար հայ ցեղին մէջ դիմագրութեան և հերոսական ոգիի գոյութիւնը և իդէալը:

Ի՞նչ կրնանք ընել, հարց դրաւ պ. Պրէսանսէ—օգնելով որբերուն միանգամայն պէտք է ձեռք կարկառել հայերուն իրենց մղած պատերազմին մէջ: Այս ընելով մենք մեզի ալ ծառայութիւն ըրած կ'ըլլանք չձգելով որ մեր քովի դիակը, Թիւրքիան, փտախտով վարակէ մեզ ալ: Ճնշում գործենք տէրութեանց վրայ, որպէս զի Հայկական արիւնհանգրութիւններուն վերջ դնեն և այսպէսով Եւրոպայի խաղաղութեան ալ նպաստած կ'ըլլանք:

Ընդհանուր և հարեանցի ակնարկ մը նետելէ յետոյ Եւրոպայի յետագիւմական շարժումին վրայ, ազգայնականութիւն և կայսերականութիւն անունին տակ, ատենախօսը արեւելեան հարցին լուծման և սուլթանէն հարցստահարած ժողովուրդները փրկելու համար, հարկաւոր է որ, ըսաւ, օսմանեան պետութեան ընդհանուր վեհապետութեան տակ, դաշնակցական րէժիմ մը հաստատուի, որ միանգամայն արեւելեան հարցի բանալին է: Բայց հեռաւոր սպագայի գործ ըլլալով այդ լուծումը, այս պահուս մենք, շեշտեց, պ. Պրէսանսէ, պէտք է առանց վերապահութեան, հայերու դիմագրութեան մեր աջակցութիւնը տանք: Փափկանկատութիւններու ետեւ ապաստանելու չենք, պէտք է քալել հերոսներուն հետ, կամ նստիլ և մեղսակից ըլլալ ոճրագործներուն»:

Տաք և բուռն ծափահարութիւններով ընդունեցան Պրէսանսէի վճռական, ազդու և ճշմարտութիւնով լեցուն խօսքերը:

Պ. Փափօն, յանուն Եւրոպայի հայ ուսանողական Միութեան, որ այդ հիանալի երեկոյթը կազմակերպելու և հովանաւորելու նախաձեռնութիւնը ունեցած էր, յուզած շեշտով շնորհակալութիւն յայտնեց պ. բանախօսին և ժընէվի ժողովուրդին, այն փայլուն համակրութեան համար, որ աւաւ այս երեկոյ հայկական դատին, և դառնալով հայ ուսանողութեան, սրտագին խրախուսներ ուղղեց անոր իրենց ազգի արի և զոհարբ պայքարին մէջ և հաւաստեց որ ժընէվի ժողովուրդը սրտով հայ ազգին հետ է իր սուրբ կռիւն մէջ:

Պ. Պրէսանսէի ձառը ահագին տպաւորութիւն առաջ բերաւ: Երկու օր բոլոր թերթերը անխտիր զբաղեցան այդ գիտական ձառի բովանդակութիւնով և իրենց ներքաղաքէն կարծիքը կարելի է ամփոփել սա տողերուն մէջ. «Անոնք, որոնք ներկայ էին պ. Պրէսանսէի բանախօսութեան, անջնջելի յիշատակ մը պիտի պահեն անկէ»:

Բանախօսութիւնը աւարտելէն յետոյ, հայ ուսանողները պ. Պրէսանսէն առաջնորդեցին ժընէվի էն գեղեցիկ պանդոկներէն մէկը, ուր պատասխանեցին արժանապէս,

իրենց ականաւոր և մարդասէր հիւրը: Ուսանողներու շնորհակալութեան ձառերուն ի պատասխան պ. Պրէսանսէ քանի մը սրտաբուխ ու անկեղծ խօսքերով սրտապնդեց հայ երիտասարդութիւնը իր իդէալի ճամբուն և իր անողոր պայքարին մէջ և հասկցուց որ հայերը հերոսական շրջանին մէջ են, և թէ իրենց գործունէութիւնով միայն պիտի կրնան դիւնագիտական սինիքութեան և անտարբերութեան զրահները խորտակել:

Հայ ուսանողութիւնը, ի յիշատակ, յատկապէս լուսանկարով պատրաստել աւած և գեղեցիկ շրջանակի մէջ դրած «Մանուկ Հայաստանի» խորհրդանիշ մեծագիր պատկերը ներքեց մեծ հրապարակագրին և հայասերին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԻՈՅ ԵՌՈՐԶԸ

ՊԱՆՏՄԱՅԻ ԵՐԿԱՌՈՒՂԻՆ. — Թիւրքիոյ քաղաքական անկումը ընական էր ծնունդ պիտի տար տնտեսական ստրկութեան: Վերջին տասը տարիներուն Արեւելքի մէջ անցուղաբծերը, արդէն Թիւրքիոյ կայսրութեան ղողանքը հնչեցուցին: Գերմանիան, մասնաւորապէս, որ զիտէ ողբերգութիւններէն մեղեդիներ քաղեւ, կամ տատապէն խաղող, փութաց զինել իր համաշխարհային նոր քաղաքականութիւնով, իր տնտեսական թոքին նոր փետուրներ աւելցնելու համար:

1870-ի պատերազմը անոր աւած էր զինուորական առաւելութեան հետ միջազգային քաղաքականութեան բանալին եւս: Պիզմարը կոնց կոփեց ներքին Գերմանիան, կը մտար որ իր յաջողութեան ծագէին իրագործել զաղթային քաղաքականութիւնը, որ ապահովութեան կափարիչ մըն էր ներքին տնտեսական ճգնաժամներու եւ պայթումներու:

Գերմանական գեր-եսամոլ քաղաքականութիւնը մտաւոր եւ բարոյական աշխարհակալութիւն մը ըլլալէ առաջ, ստամոքսի եւ աղիքներու զոհացման հարց մըն է, որուն մէջ կը մտնէ նաեւ կայսեր մը ցուցամոլ պատմական սնամիտութիւնը, որ տնտեսական շարժումին քով պակաս խեղճատակի դեր չի կատարեր: Մակայն գերման անբարտաւան քաղաքականութիւնը, որ չունի իր պատմական ընաշրջումը, կոպիտ իր շարժումներին եւ վարմունքին մէջ, չի տար ազնւագոյն զաղափարը եւ չունի վեհամաս ժպիտը դէպի ուրիշներուն իրաւունքը: Երկաթէ ձեռնիկներով կոպէն վարել յոյնիսկ ուրիշի տան մէջ: Գերմանական յաջողութիւնը աշխարհի զանազան կէտերու վրայ աւելի առերեւոյթ ըլլաւ կը թիւ քան իսկական: Ուրիշ ազգերը վախցնելու գերման մանկավարժական սիստէմը ապագայ չունի. անարգաւած ժողովուրդի մը գիտակցութիւնը բաւական է գերման կայսեր այդքան կոպիտ եւ արհամարոտ բացազանշութիւնները փորը քաշել տալու համար—ինչպէս կ'ընեն լեհերը—որ կը հրամայէ շարքել անխնայ ինչ որ օտար է, ամբարշտութիւն ունենալով ըսելու «իմաստութեան սկիզբը Գերմանիոյ վախն է»:

Հայ արիւնի ողորդումները, գերման «դէպի արեւելք» կարավաններու ծաւալները հարթեցին: Գերման վեհամասն կայսրը որուն մէջ գերակշիռ ըլլաւ կը թիւ հակամարդկային մ'օնաւոր երբ, կրցաւ օգտուիլ անմեղութեան արիւնի մէջէն ծուկ կամ... մարգրիտ որսալ: շոյելով, համբուրելով եւ խողովներով սուլթան Համիդի սրիկայական եւ արիւնային քնազդները:

Տասս տարիէն աւելի է որ Գերմանիան զօր կուտէ ծնւթ բերել Անատոլիոյ մէջ տնտեսական առաւելութիւններ, մենաշնորհներ եւ գերման ածուխ զաղթականութեան կալուած: Զողեր պարաստել: Փոքր Ասիան, իր կլիմայով, հողի հրաշալի բարեբերութիւնով, միջավայրի անհուն բազմազանութիւնով, ոչ միայն Գերմանիոյ շտեմարան կարող է ըլլալ աշխատասէր ձեռքերու տակ, այլեւ Եւրոպայի:

Ժամանակին, երբ Փոքր Ասիան դեռ բարեկեան խառնարան մը կը ձեւացնէր, երբ հոռմէական արծիւը իր լայն շուրջ կը պտտեցէր հոն, Բասնի կամ Հայաստանի սարահարթի բարեբեր դաշտերն էին—այժմ խոպան ու ամուլ—որոնք Ափրիկէի դաշտերուն հետ կը կերակրէին յաւիտենական քաղաքին «հաց ու խաղ» աղաղակող խոժանը:

Պատմութիւնը կը կրկնուի: Փոքր Ասիոյ ամբողջ հարաւային մասը երկաթալուծիներու ողորդիւնին տակ պիտի արթննայ, պիտի վերածնի. ամուլ կոյսն է որ պիտի արգասաւորի, մարդկային բարօրութեան նոր ժպիտ մը եւս աւելցնելով: Ամբողջ ան եր-

կերտները, ուր երկաթե ծամբաները պիտի աշխարհակալեն՝ ամենաբարեքեր մասերն են թրքական Ասիոյ, եւ նոյն իմըր աղաշաւոր Ասիոյ եւ կեդրոնական Ասիոյ հաղորդակցութեան ուղին եղած են: Գրեթէ այժմու երկաթուղիի գծին կը հետեւէր Հայաստանի լեռնադաշտին եւ Սիւրբոյ ու Միջագետքի անապատներու սահմանագծին վրայէն, պարսից կայսրութեան արքունի մեծ պողոտան, որ Շոշէն սկսած կը վերջանար Սարդիկէ, «Կիլիկիան դունդըն» անցնելով, եւ որուն վրայ, ըստ Հերոդոտոսի, հազար հարիւր քարվանսերայ կար:

Գրեթէ երեք հազար քիլոմէթր գիծ մը, որ Թիւրքիոյ ծակատաքիւր կը շրջանակէ, օտարներու ձեռք պիտի անցնի եւ որուն հետատեսիլը այժմէն դժուար է նախատեսել:

Կիլիկիոյ Պոլիս այցելուն, որոնք այնքան սուղի նստան դժբախտ ժողովուրդին եւ գանձին, խալիֆայէն զօրով իւրից գծին արտօնութիւնը, թէեւ սուլթան Համիդ-գաւթին իսկ հրամայող վեհապետ—սրտանց չէր ուզեր իր երկրի սահմանները այնքան մօտեցնել իր դողդուղ գահին, եւ կեանքի նոր զարկ մը տալ իր գերի եւ տգէտ ժողովուրդին:

Հարաւային մասը անցնելով գերմաններու ձեռք, հիւսիսային մասը արդէն կարողապէս Ռուսիոյ ազդեցութեան միջոցաւ մէջ է: Դ՛նչ կը մնայ ուրեմն Թիւրքիոյ—յոյսը, ըսեն զուցէ դասական այդ քաղաքանշունքիւնը յիշելով: Անգլիա՝ թեւեւակաւ իր պատերազմով, թոյլ շահագրգռութիւն մը ունի դէպի Թիւրքիոյ անցուղարձին. իսկ Փրանսան հազիւ պրծած նաբօլէօնի արծիւ շուրջէն, Ռուսիոյ արծիւին ներքեւէն քալելու պէտքը կը զգայ:

Երկաթուղին Գոնիայէն պիտի սկսի եւ վերջանայ Պարսից ծոցը, անցնելով Քարամանի սարահարթերէն, Տօրոսի շղթաներէն, Կիլիկիոյ պտղաբեր դաշտերէն, Եփրատէն եւ քերելով Հայաստանի լեռնադաշտին փէշերը, պիտի հասնի Մուսուլ, համբուրելով Նինւէի, Բորշապատի աւերակները, ուրիշ Տիգրիսի աջ ափը բռնած պիտի արշաւէ Պաղտատ, ուր երբեմն իսլամութիւնը իր փառքի գէնիթին հասաւ Հաղուն-էլ-Ռաշիտներու օրով, եւ ուր ամբողջ Ասիոյ ահաւոր եւ քանաստեղծական երեւակայութիւնը մարմին առաւ «Հազար ու մէկ գիշերներու» մէջ:

Գիծը կտրելով արմաւի անտառները, «խօր»երը եւ եղեգուն ծախիճները, պիտի անցնի Եփրատի ափը, ուր պիտի հանդիպի Ալիի ու Հասանի գերեզմաններուն, «Էրպէլա», Նէժէտ, Բաքելոնի աւերակ հողերունը ողջունելով, որուն տակ թաղած են Աւտարդէի տաճարին զգայապաշտ սարսուռները, — խառնակութեան աշտաբակին պատրանքը կրել տալով ծամբորդին, պիտի հասնի Պարսա, ժամտախօի հայրենիքներէն մէկը, եւ վերջապէս պիտի յանգի Պարսից ծոցը իր ցոռկը դէպի Հնդկաստան ուղղած: Ատենով Հայաստանն էր որ Եփրատի եւ Տիգրիսի «քաղոք ծամբաներուն» վրայէն կաշիէ նաւակներով իր քերքերը կը փոխադրէր Բաքելոն, ուր հաւաքած էին աշխարհի հարստութիւնը ու աւարը:

Գերմանացիք այժմէն ամէն պատրաստութիւն կը տեսնեն զալիք երջանիկ եւ յոյսի օրերուն համար, կուսումնասիրեն զարմանալիօրէն այդ երկիրներուն ժողովուրդները, անոնց զրապանութիւնը. քանի տարի է արդէն կ'աշխատին քիւրդ զրապանութիւն մը ստեղծել, հաւարելով անոնց ժողովրդական երգերը եւ միանգամայն... չմոռնալով փայփայել թիւրք կառավարութիւնը, անոր փառիշտ, ցոյց տալով որ Թիւրքիան Գերմանիոյ ազդեցութեան տակ մեծ ապագայ պիտի ունենայ: Քանի ժամանակ է այդ զոհնը կը լսենք գերման ուղեւորներու քերնէն, որոնք չեն գիտեր ի՛նչ դիրք առնեն թիւրքերու արեւելեան քէլֆը քերքելու համար:

Այդ մեծ գործին աշխատութեան բոլոր պէտքերը պիտի երթայ Գերմանիայէն, նոյնիսկ հազարաւոր քանութիւններ Գերմանիայէն պիտի գան: Պիտի գան մեր կուտը ուսեն, հակիթները Գերմանիոյ մէջ ածելու համար:

Մուսուլի, Պաղտատի եւ Պարսիսի անհունօրէն քարերը դաշտերը, ուր, ըստ յոյն պատմագրին, ցորենը եւ զարին մէկին առել հարիւր, երկու հարիւր կուտային, պիտի քարգաւաճին, պիտի շահագործուին եւրօպական դրամագլխի գործունէութիւնով եւ պիտի ունենայ նաեւ անշուշտ իր պատմական եւ հնագիտական հետեւանքները:

Գերմանիոյ կայսրը Շրէի ափերուն վրայ նստած, Ալեքսանդրիոյ աշխարհակալութիւնը կը կատարէ, մէկ համբոյրով կամ մէկ ժէստով. գուցէ իր «ամենաազնիւ բարեկամին», Համիդին կը հաւատցնէ որ Թիւրքիոյ խաբուու շէնքին մէջէն երկաթե ամուր զօտիներ կանցնէ, մինչեւ Սինաարի դաշտը, ուր ապառաժի բեկոր մը փոշիքաւ նաբուգոդոնոսորի կաւէ սրունքներով ահաւոր արձանը, եւ որու մոխիրփոշիներուն տակ գուցէ օր մը գերմանացիները կարող ըլլան գտնել Թիւրքիոյ խորհրդաւոր ծակատաքիւրը:

Մանէ, թեկէն, փարէս:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷՆ ՍՈՒՅՈՒՆ Է՛

ՄէնթրՈՒՄԱՒ-ՓՈԼՍԻ կոմիտէն (1900) Գուրգէն, Չինար, Սալման 5-ական դօլար, Փերուշան 1, Գանձէն 9.90: Գումար 25 դօլար 90 սէնթ:

ԼՕՐԷՆՍԻ կոմիտէն (1900 յունվ.-դեկտ.) յունվ.-յունիս ամսավճարներ 54 դօլար, Ե. Զ. շրջանի ամսավճարներ 12 դօլար 25 սէնթ, յունիս-դեկտ. ամսավճարներ 42 դօլար, Պրակի հասոյթ 4 դօլար 8 սէնթ, «Դրօշակի» հանգանակութիւն 30 դոլ., (տես «Դրօշակ» թիւ 3, 1901): Գումար 142 դօլար 33 սէնթ:

ՓՐՈՎԻՏԷՆՍԻ կոմիտէն (1900-1901 շրջանին) Ա. Ն. 25 դօլար, Ս. Վ., Բ. Տ. Մ., Ա. Թ., Լ. Ս., Ա. Մ. 20-ական, Մ. Խ. 15, Պ. Փ. 15, Մ. Ե. 13, Կ. Ս. 12, Բ. Զ. 8, Տ. Զ. 7, Մ. Գ. 7 Արգ. Թ., Զ. Խ., Պ. Թ., Ս. Մ., Զ. Ա., Դ. եւ Ս. Մ., Զ. Մ., Ա. Ս. 10-ական, Ա. Թ., Պ. Մ., Կ. Փ., Զ. Դ., Զ. Մ., Զ. Մ., Ս. Փ., Կ. Փ., Զ. Բ., Ն. Թ., Պրակար, Մ. Դ. 5-ական, Կ. Տ. Զ., Տ. Զ. Վ., Ս. Պ., Հաճի 3-ական, Կ. Ե., Ալօ, Ռ. Պ., Օ. Բ., Ա. Պ. 2-ական, Զ. Կ. 5, Մ. Թ., Զ. Վ., Պ. Զ., Զ. Ե., Զ. Ն., Զ. Տ. Թ., Ա. Պ., Ա. Ե., Ն. Զ., Զ. Փ., Ն. Մ., Գ. Պ., Զ. Պ., Զ. Դ., Զ. Դ., Զ. Դ., Զ. Ա. մէկ-մէկ-ական: Գումար 393 դօլար, եւ 10 դօլար 75 սէնթ զանազան անձերէ նւէր, «Դրօշակի» տասնամեակի առթիւ, համագումար 403 դօլար 75 սէնթ:

ՄէնթրՈՒՄԱՒ ՓՈԼՍԻ կոմիտէն Փրովիտէնսի կոմիտէն հետ հրապարակային ժողովի մը մէջ հանգանակած 1901 ապրիլի 14-ին Զ. Պ. 28 դօլար, Վ. Բ., Ս. Զ. Զ., Ն. Ա., Պ. Մ. 13-ական, Զ. Ն. 10, Պ. Կ. 10, Մ. Ռ. 13, Ս. Խ. 2, Կ. Օ. 3, Պ. Դ. 2, Ա. Ն. 1. 25, Ա. Թ. 1, Կ. Պ. 1. 25, Մ. Ա. 1, Ա. Ա. 1. 25, Կ. Խ. 1. 25, Զ. Զ. 1: Գումար 128 դօլար: Փրովիտէնսի եւ Մէնթրալֆօրս համագումար 531 դօլար 75 սէնթ:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԿՈՄԻՏԷՆ՝

Ա՝ 5 թերթի մասցած 17 հոուրի, Ն՝ 10՝ 6. 20, «Հանգ» խմբի անդամավճար 21, «Սերոր-Աղբիւր» խմբի անդամներից (սեպտեմբեր) 35, «Կայսրան» խմբի անդամներից 59. 80, «Պէտո» խմբի երկնայթից 400, «Ալիշան» եւ «Ալիք» խմբի երկնայթից 600, «Ալիշան» խմբի անդամներից (նոյեմբեր) 35. 50, «Ոսկա-նապատի» երկնայթից 313. 15, «Սերոր-Աղբիւր» խմբի անդամներից (հոկտեմբեր) 44, «Կարօ-Զօրեան» խմբի անդամներից 12. 50, «Շէրօ-Զաթօ» խմբի անդամներից (նոյեմբեր) 17, «Հագր» խմբի անդամներից (դեկտ.) 3, «Ալիք» խմբի անդամներից (սեպտ. հոկտ. նոյեմ.) 52. 50, Թ.-ի միջոցով վիճակահաղ թերթից 9. 50 հոուրի: Գումար 1626 հոուրի 15 կօպէ:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

ՖիլիթՊէ՝ «Շաքէ»-ի կանանց խումբէն՝ 290 արծաթ լէվ, «Պուկարացի Պետօ» խումբէն 17, «Արեւելեան» խմբ. 16. 50, «Արամ-եան» խմբ. 60, «Հեթում-Գազիկ» խմբ. 10, Սիմէօն ծերունի 12, Ասպետ 6, Մ. Գ. 3, Կ. Ե. 8, Ռիշիմոն-Էէն 100, Գ.-ի «Անժուր-րաց» խմբ. 53. 20, ՍԱՄՕՎԻՏԷՆ 30: Գումար 605. 70՝ արծաթ լէվ:

ՍՈՒԼԻՆԱՅԻ «Նոր-դար» խմբ. սոսցած է (հոկտ. նոյեմբ. եւ դեկտ.) Համազասպ, Տրդատ, Խոսրով, Միքօ, Միսակ, Պետրոս, Հրանդ, Չինար, Խորէն 3-ական Ֆրանք, Տաճատ 12, Պարթեւ 5, Վահրիշ 3. 30, Թաթուլ 8, Ալազ 6, երկու ազգասիրներ կամարու նւէր Անատ 10, Ժադիկ 5, «Կարին խումբ Գազարով, Արամ, Գուրգէն, Բաքէլէն, Աշոտ, Կարօ, Վահրամ, Տիգրան, Միհրան, Ժարտար, Հայկ 3-ական, Վրդանէս 4, Գարեգին 5, Օնիկ 5, Արզար 5, Յովնան 3, «Տարօն» խմբ. (նոյեմբ.-դեկտ.) Սրապիոն, Թորգոմ, Ժարպիկ, Հաթօ, Շաւարշ, Գասպար, Մարգար, Մրշիւն, Արծրունի, Կարիճ, Բայնուր 2-ական Ֆր.: Գումար 153 Ֆրանք 30 սանթիմ:

ՎՐԻՊԱԿ. — «Դրօշակ» Ա՝ 7 ՎԱՍՊՈՂԻՐԱԿԱՆԻ ՆԵՐԱՄԱՆԵՐԻՆ-ների մէջ մի սխալ սպրտած է՝ ԿԱՐՄԻՐ գիւղի խմբ. 17, պիտի լինի ԿԱՐՄԻՐ գիւղի խմբ. 29:

Եւրօպայի Հայ Ուսանողական Միութեան 1902 թւի համագումարը, ինչպէս երեւում է կարգադիր յանձնա-ժողովի հրատարակած շրջաբերականից, պիտի բացւի Ժընէվ Զատիկի տօներին, այն է՝ մարտի 31-ին, երկու-շաբթի օր: Համագումարը տեւելու է մի շաբաթ:

Խմբագրութեան գիմել հետեւեալ հասցեով՝

Rédaction du «Droschak», Genève (Suisse)